

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՌՔԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՆԵՐ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Դեռևս 1956 թվականի առաջին ամիսներին, երբ Վեհափառ Հայրապետը հովվապետական այցելությամբ գտնվում էր Մերձավոր Արևելքի և Արևմտյան Եվրոպայի մի շարք հայ գաղութներում, սրտագին հրավեր էր ստացել նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց թեմի թեմական խորհրդից՝ այցելելու ԱՄՆ-ի Իր հոտին։

ԱՄՆ այցելելու հրավերները կրկնվեցին հետագայում։

Վեհափառ Հայրապետը, սույն թվականի մայիսի 20-ին, ընդառաջելով հատկապես Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան և Արևմտյան թեմերի առաջնորդներ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի և գերաշնորհ Տ. Բաբգեն եպիսկոպոս Վարժապետյանի, ինչպես նաև ազգային, եկեղեցական և թեմական իշխանությունների վերջերս կատարած հրավերներին, գոհունակությամբ ընդունելով դրանք, մեկնեց Նյու-Յորք՝ հովվապետական այցելություն տալու «Ամերիկայի հայ եկեղեցիներին, անձամբ տանելու համար Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությունը անխտիր բոլոր հայ հավատացյալներին՝ համբարձումն մեր սուրբ հավատի և Հայաստանյայց Եկեղեցու սիրո միության ու ներքին խաղաղության»,— ինչպես նշվել է Վեհափառ Հայրապետի մեկնման առթիվ, Գերագույն Հոգևոր Խորհրդի մայիս 7 թվակիր պաշտոնական հաղորդագրության մեջ։

Վահափառ Հայրապետի ԱՄՆ կատարած պատմական ու շնորհաբեր այս ուղևորությունը մեծ իրադարձություն է Սփյուռքի մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ, որովհետև Հայ Եկեղեցու պատմության մեջ առաջին անգամն է, որ Ամենայն Հայոց մի Հայրապետ այցելում է հեռավոր ԱՄՆ-ի հյուրընկալ հողը։

ՆՅՈՒ-ՅՈՐՔՈՒՄ

Մայիսի 20-ին, ուրբաթ, Վեհափառ Հայրապետը Իլ—18 ինքնաթիռով մեկնեց Հյուսիսային Ամերիկա։

Այս ուղևորության ժամանակ Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, Մայր Աթոռի երիտասարդ միաբաններից հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը՝ որպես գավազանակիր, և դիվանապետ Հայկ Առաքելյանը։

Մոսկվայի Վնուկովոյի օդանավակայանում Վեհափառին և Նրա շքախմբին ճանապարհեցին ՍՍՍՄ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի ներկայացուցիչներ Սոլովյովը և Ռումյանցևը, ինչպես նաև Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետ Գևորգյանը, արժանապատիվ Տ. Խաչատուր քահանա Տեր-Հարությունյանը, եկեղեցական խորհրդի անդամները և հավատացյալներ։

Առավոտյան ժամը 10.30-ին, երկու ժամվա թռիչքից հետո, Իլ—18 ինքնաթիռը վայրէջք կատարեց Ստոկհոլմում։ Ապա Վեհափառ Հայրապետը Իր ճանապարհորդությունը մինչև Կոպենհագեն շարունակեց սկանդինավյան SAS ինքնաթիռով, ապա ամերիկյան Դուգլաս № 8 ինքնաթիռով, ութ ժամվա թռիչքից հետո Ատլանտյանի վրայով, հասավ Նյու-Յորք, տեղական ժամանակով ժամը 4.30-ին։

Նյու-Յորքի Այդելվայդ օդանավակայանում Վեհափառ Հայրապետին սրտագին ծափերով և ջերմորեն դիմավորում են ԱՄՆ-ի հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոսը, թեմական խորհրդի լրիվ կազմը՝ ատենապետ պր. Ե. Աղաճանյանի գլխավորությամբ, հոգևորա-

կան ամբողջ դասը, մամուլի ներկայացուցիչներ և հոծ բազմություն։

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ողջունում է Նյու-Յորքի քաղաքապետի տեղակալ Ջոն Բեռնը, որը բարի գալստյան սրտագին խոսք է ասում Վեհափառ Հայրապետին՝ հանուն Նյու-Յորք քաղաքի։

Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելության բարեբաստիկ առիթով, հանուն թեմի ազգային-եկեղեցական մարմինների և ԱՄՆ-ի համայն հայ հավատացյալ ժողովրդի, օդանավակայանում Նորին Ս. Օծության սիրով և հարգանքով ողջունում է նաև առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոսը։

Ողջույնի այս սրտագին խոսքերին պատասխանում է Վեհափառ Հայրապետը և ապա առաջնորդվում է օդանավակայանի պաշտոնական ընդունելության սրահը, որտեղ բարեհաճում է ընդունել ամերիկյան մամուլի ներկայացուցիչներին և պատասխանել նրանց հետաքրքրող հարցերին։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը մեծ շքերթով և բազմաթիվ ինքնաշարժների ու ոստիկանական պատվո մեքենաների ուղեկցությամբ առաջնորդվում է Լոնկ-Այլենդի (Նյու-Յորքի արվարձան) հայոց Սրբոց Նահատակաց եկեղեցին, որտեղ հավաքված հայ հավատացյալների խուռն բազմությունը, խանդավառորեն և սրտագին ողջույններով, ցնծության աղաղակներով դիմավորում է իր սիրեցյալ Հովվապետին։

Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով և եկեղեցական թափորով մուտք է գործում եկեղեցի, ողջունում և օրհնում հավատացյալներին, որոնք արարողության վերջում ջերմեռանդորեն մոտենում են համբուրելու Նորին Ս. Օծության Աջը։

Եկեղեցական արարողության ավարտին, եկեղեցու առընթեր սրահում կազմակերպվում է հյուրասիրություն ի պատիվ Վեհափառ Հայրապետի։

Ապա Վեհափառ Հայրապետը նույն շքերթով առաջնորդվում է Նյու-Յորքի մեծագույն պանդոկի՝ «Ուալդորֆ Աստորիա Տաուեր»-ի 36-րդ հարկում Իրեն հատկացված հարկաբաժինը։

Փոքր ինչ հանգստանալուց հետո, Վեհափառ Հայրապետը պաշտոնական առաջնորդվում է Նյու-Յորքի հայոց նորակառույց առաջնորդարանը, որտեղ թեմական խորհուրդը, ի պատիվ մեծանուն Հյուրի, կազմակերպում է ընդունելության ճաշկերույթ։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԸ

Մայիսի 21-ին, շաբաթ առավոտյան, Վեհափառ Հայրապետը այցելում է առաջնորդարան և ողջունում թեմի պաշտոնական և ազգային-հասարակական ծանոթ դեմքերին։

Առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը ողջունում է Կիրակնօրյա դպրոցի տեսուչ հոգեշնորհ Տ. Մյուռոն ծայրագույն վարդապետին ու 50-ից ավելի ուսուցիչներին և ուսուցչուհիներին և օրհնում Կիրակնօրյա դպրոցի մի քանի հարյուրի հասնող աշակերտական խումբը։

Նույն օրը, հետմիջօրեի ժամը 1-ին, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետի բոզում է հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը.

Իսկ գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազանը պատարագում և քարոզում է Պետերսոնի հայոց Ս. Ղևոնդյանց եկեղեցում, եկեղեցու կառուցման 25-ամյակի կապակցությամբ։

Կիրակնօրյա սրբազան արարողություններից հետո տրվում է ճաշկերույթ ի պատիվ Վեհափառ Հայրապետի, եկեղեցու սրահում։

Հետմիջօրեին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել բազմաթիվ ազգայինների այցելությունը մինչև ուշ դիշեր։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

պատվո նախագահությամբ, գումարվում է թեմական խորհրդի հանդիսավոր նիստը։

Ժամը 4-ին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, առաջնորդարանում կազմակերպվում է ճաշկերույթ, որին ներկա են լինում թեմի ազգային-եկեղեցական մարմինները, մամուլի ներկայացուցիչները։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել պաշտոնական այցելությունը ծանոթ ազգայիններ և կազմակերպությունների ներկայացուցիչների։

Մայիսի 22-ին, կիրակի, Նյու-Յորքի հայոց Ս. Խաչ եկեղեցում պատարագում և քարոզում է հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը.

Իսկ գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազանը պատարագում և քարոզում է Պետերսոնի հայոց Ս. Ղևոնդյանց եկեղեցում, եկեղեցու կառուցման 25-ամյակի կապակցությամբ։

Կիրակնօրյա սրբազան արարողություններից հետո տրվում է ճաշկերույթ ի պատիվ Վեհափառ Հայրապետի, եկեղեցու սրահում։

Հետմիջօրեին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել բազմաթիվ ազգայինների այցելությունը մինչև ուշ դիշեր։

Մայիսի 23-ին, երկուշաբթի, հետմիջօրեի ժամը 1—6-ը Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունում է Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի բազմաթիվ հոգևոր հովիվների և առանձին ազգայինների այցելությունը։

Երեկոյան, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետին այցելելով, բարի գալուստ են մաղթում Նյու-Յորքի Հույն Օրթոդոքս եկեղեցու ներկայացուցիչները։

Մայիսի 24-ին, երեքշաբթի, առավոտյան ժամը 11-ին, հյուրանոցի իր հարկաբաժնում Վեհափառ Հայրապետը ընդունում է այցե-

լությունը Ամերիկայի Եպիսկոպոսական (Անգլիական) Եկեղեցու կարկառուն դեմքերից մեկի՝ Լաուրենս Լեինգտոն Սկեյֆ եպիսկոպոսի։

Ապա, կեսօրից հետո ժամը 4—8-ը, Վեհափառ Հայրապետը հյուրանոցում նույնպես ընդունում է այցելությունը զանազան ազգայինների։

Երեկոյան ժամը 8-ին, նույն հյուրանոցի շքեղ ճաշասրահներից մեկում, Գավուքճյան և Տատուրյան ծանոթ ընտանիքները, ի պատիվ Վեհափառ Հայրապետի կազմակերպում են ընդունելություն, որին մասնակցում են ավելի քան 100 հրավիրյալներ՝ հայ և ամերիկացի։

Մայիսի 25-ին, շաբաթի, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը մասնավոր հրավերով և մեծ շքախմբով ներկա է լինում Նյու-Յորքի Եպիսկոպոսական Եկեղեցու աստվածաբանական կաճառի (ակադեմիայի) շրջանավարտների ամավերջի հանդեսին, որը կայանում է Մայր Տաճարում։

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևելյան Թեմում Վեհափառ Հայրապետի կատարած հովվապետական ուղևորության ժամանակ, բացի Վեհափառ Հայրապետին ուղեկցող անձերից, Նորին Ս. Օծության ընկերակցում էր բարձրաստիճան հայ հոգևորականներից և պաշտոնական աշխարհականներից բաղկացած պատվո մի շքախումբ, որի կազմումն էին գերաշնորհ Տ. Սիոն, Տ. Մամբրե, Տ. Տիրան արքեպիսկոպոսները, հոգեշնորհ Տ. Մյուռոն ծայրագույն վարդապետը և Թեմական խորհրդի ատենապետ պր. Երվանդ Աղաճանյանը։

Եպիսկոպոսականների Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետը ընդունվում է մեծ պատիվներով և հարգանքներով։

Հետմիջօրեի ժամը 3-ին, Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունում է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Նյու-Յորքի շրջանային մասնաճյուղերի ղեկավարներին և ջերմ զրույց ունենում նրանց հետ։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը բարեհաճում է պատվել ընտանեկան օջախը տեր և տիկին Եդվարդ և Լուսին Ժամագործյանների և օրհնում է նրանց աղն ու հացը։

Մայիսի 26-ին, հինգշաբթի առավոտյան, հյուրանոցում Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը Բերգոն Կաունտիի հայ համայնքի ծխական խորհրդի և զրուցում նրանց հետ՝ նոր եկեղեցու կառուցման հետ կապված հարցերի շուրջ։

Ժամը 2-ին, Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունում է Նյու-Յորքի Հայ տիկնանց միության անդամներին։

Ժամը 3-ին առաջնորդարանում կազմակերպվել էր Ամերիկայի հայ մամուլի ավելի քան բան թղթակիցների համար պրես-կոնֆերանս։ Վեհափառ Հայրապետը, ողջունելով թղթակիցներին, ավելի քան մի ժամ խոսում է Իր հովվապետական այցելության ազգաշեն և խաղաղասիրական նպատակների մասին, ապա պատասխանում հայ մամուլի ներկայացուցիչների հարցերին։

Թղթակիցների համար կազմակերպված ասուլիսից հետո, Վեհափառ Հայրապետը ընդունեց Ֆիլադելֆիա քաղաքի հայոց Ս. Երրորդություն եկեղեցու ծխական խորհրդի անդամներին։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը Իր այցելությամբ պատվեց Նյու-Յորքի հայոց Թեմական խորհրդի անդամ տեր և տիկին Հարություն և Աղավնի Թաթոսյանների ընտանեկան հարկը և օրհնեց նրանց սեղանը։

Մայիսի 27-ին, ուրբաթ, նախ հյուրանոցում և ապա առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելությունը հայրենակցական միությունների վարչությունների, մամուլի ներկայացուցիչների, արվեստագետների և մտավորականների։

Ժամը 2-ին Վեհափառ Հայրապետը այցելեց տիկին Վավա Խաչատուրյանի նկարչական ստուդիան։

Երեկոյան, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ներկա լինել տեր և տիկին Հակոբ և Երվանդուհի Աստատուրյանների ի պատիվ Իրեն կազմակերպած ընդունելությանը, իրենց ընտանեկան հարկի տակ։ Ընդունելության ներկա եղան նաև Ամերիկայի հայ մտավորականության ներկայացուցիչներ, գրողներ Բենիամին Նուրիկյանը, Արամ Հայկազը, Հեղինե Դավիթյանը, Ս. Մանվելյանը և ուրիշներ։

Ընդունելության ընթացքում Վեհափառ Հայրապետը ջերմորեն ողջունեց բոլորին, մանավանդ Ամերիկայի հայ մտավորականության ներկայացուցիչներին, խոսեց Ս. Էջմիածնի և ի մասնավորի Մայր Հայրենիքի մշակութային կյանքի վերելքի մասին։

Մայիսի 28-ին, շաբաթ առավոտյան, Վեհափառ Հայրապետը հյուրանոցում ընդունում է հայ եկեղեցիների հովվությունների առանձին պատվիրակությունների, որոնց թվում նաև Կալիֆոռնիայի հայոց Թեմի ներկայացուցիչներին, Լոս-Անժելոսի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Տերվիշյանին և Թեմական խորհրդի ատենապետ պր. Ջան Քյուրքճյանին։

Ժամը 1-ին առաջնորդարանում տեղի է ունենում Կիրակնօրյա դպրոցի ուսանողության աշակերտական հանդեսը, գեղարվեստական ճոխ հայտագրով։ Վեհափառ Հայրապետը խոսելով ուսանողության, շեշտում

է մանավանդ հայոց լեզվի իմացության կարևորությունն ու անհրաժեշտությունը։ Վերջում Վեհափառ Հայրապետը օրհնելով Կիրակնօրյա դպրոցի ուսանողությանը, բաժանում է նրանց Ս. Էջմիածնից բերած խաչիկներ։

Նույն օրը, ավելի ուշ, Վեհափառ Հայրապետը ընդունում է նաև Կոմիտաս վարդապետի անվան դպրաց դասը և Կիրակնօրյա

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊՐԵՍ-ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ՆՅՈՒ-ՅՈՐՔՈՒՄ

վարժարանի ուսումնական խորհրդի անդամներին։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը իր շնորհաբեր այցելությամբ պատվում է պր. Ղևոնդ Աղաճանյանի ընտանեկան օջախը և օրհնում նրա սեղանի աղն ու հացը։ Ի պատիվ Վեհափառ Հայրապետին կազմակերպված ընդունելության ներկա են լինում բազմաթիվ այլ հրավիրյալներ։

Մայիսի 29-ին, կիրակի, գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում Նյու-Յորքի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում։

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզում է Վեհափառ Հայրապետը, իր հայրապետական պատգամը տալով Ամերիկայի հայության։ Սուրբ պատարագին ներկա է լինում ավելի քան 2000 հոգի և երկյուղածորեն լսում Վեհափառ Հայրապետի պատգամը։

Սուրբ պատարագից հետո, եկեղեցու սրահում, ի պատիվ Վեհափառ Հայրապետին տրվում է ճաշկերույթ, որին մասնակցում է ավելի քան 200 հոգի։

Ժամը 4.30-ին Վեհափառ Հայրապետը հյուրանոցում ընդունում է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության կենտրոնական վարչության անդամներին, նախագահ պր. Ալեքս Մանուկյանի գլխավորությամբ։

Երեկոյան, Նյու-Յորքի հայոց թեմական խորհուրդը, ի պատիվ Վեհափառ Հայրա-

պետի, կազմակերպում է մեծ ընդունելություն, հյուրանոցի շքեղ դահլիճում։ Ընդունելության ներկա է լինում ավելի քան 1000 հոգի, որոնց թվում նաև քրիստոնեական քույր եկեղեցիների պետեր, պետական, հասարակական բարձրաստիճան հյուրեր։

Ընդունելության մասնակիցները, դահլիճ մտնելուց առաջ, համբուրում են Վեհափառ Հայրապետի Աջը և ստանում խաչիկներ։ Ավելի քան մի ժամ է տևում աջահամբույրի այս հանդիսավոր արարողությունը։

Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպված այս սեղանը ղեկավարում է Նյու-Յորքի Ռոկֆելլերի բանկի տնօրեն, տնտեսագետ Ջարլի Աճեմյանը։ Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետին ողջունում են նաև օտար բարձրաստիճան հոգևորականներ և պետական պաշտոնական անձնավորություններ, որոնց թվում Նյու-Յորքի Եպիսկոպոսական Եկեղեցու գերապատիվ Տ. Հորաս Ու. Բ. Դոնեգան եպիսկոպոսի ներկայացուցիչ արժանապատիվ դոկտ. Կանոնիկոս Էդուարտ Ն. Ուեստը, Ամերիկայում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Ռոզուել Պ. Բառնեսը և Քրիստոնեական Եկեղեցու ազգային խորհրդի նախագահ դոկտ. Էդուին Տ. Դահլբերգը և ուրիշներ։

Ընդունելության վերջում խոսում է Վեհափառ Հայրապետը։

Թեմական խորհրդի՝ Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպած այս առաջին մեծ ընդունելությունն անցնում է շատ խանդավառ, տպավորիչ և խորապես կրոնաբույր մթնոլորտում։

Մայիսի 30-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 10-ին, հյուրանոցի Իր հարկաբաժնում, Վեհափառ Հայրապետը ընդունեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանի այցելությունը և երկար զրույց ունեցավ նրա հետ՝ ազգային-եկեղեցական հրատապ հարցերի շուրջ։

Վեհափառ Հայրապետը նույն օրը ընդունեց նաև բազմաթիվ այցելությունները զանազան ազգայինների, որոնց թվում նաև պրոֆ. Մանասե Սևակի։

Ժամը 2-ին Վեհափառ Հայրապետը ընդունեց նաև Մայամիի հայ համայնքի պատգամավորությանը՝ պր. Հենրի Բորտի գլխավորությամբ։

Երեկոյան ժամը 7-ին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի նախկին առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը իր բնակարանում ընդունելություն էր կազմակերպել։ Ընդունելությանը ներկա էին ավելի քան 50 հոգևորական և աշխարհական հրավիրյալներ։

Մայիսի 31-ին, երեքշաբթի առավոտյան, Վեհափառ Հայրապետը հյուրանոցում բարեհաճեց ընդունել բազմաթիվ այցելություններ։

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը այցելեց պր. Հարություն Հազարյանի տունթանգարանը։ Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելության առթիվ, պր. Հազարյանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին նվիրեց հին եկեղեցական արվեստի 32 կտոր թանկարժեք ձեռագործ եկեղեցական զգեստներ և այլ իրեր։

Ժամը 3-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Նյու-Յորքի Մետրոպոլիտեն թանգարանի արևելյան եկեղեցական արվեստի բաժինը։

Ժամը 4-ին առաջնորդարանում Վեհափառ Հայրապետին այցելեցին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Ամերիկայի շրջանի վարչության անդամները, գլխավորությամբ ատենապետ պր. Երվանդ Մավյանի և քարտուղար Ռ. Սարյանի։

Ապա Վեհափառ Հայրապետը ընդունեց առաջնորդարանի օժանդակ մարմնի անդամների այցելությունը և վերջում՝ «Դրստերք Վարդանանց» կազմակերպության ղեկավար անդամների այցելությունը։

Նույն օրը երեկոյան Վեհափառ Հայրապետը այցելեց Յունիոն Սիտիի հայոց Ս. Խաչ եկեղեցին։ Նորին Ս. Օծությունը «Հրաշափառ»-ով առաջնորդվեց դեպի եկեղեցի, ուր ներկա էին ավելի քան 1000 հավատացյալներ։ Պաշտվեց երեկոյան ժամերգություն, ապա կատարվեց Հայրապետական մաղթանք։

Եկեղեցական արարողության ավարտին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպվեց ընդունելություն՝ եկեղեցու կից սրահում։

Ընդունելության ժամանակ խոսք առին գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոսը, թաղականության ատենապետ պր. Նուպար Տորյանը և հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Վաչե վարդապետը։

Վերջում խոսք առավ Վեհափառ Հայրապետը և օրհնեց բոլորին։

Հունիսի 1-ին, շաբաթշաբթի, Վեհափառ Հայրապետը, հյուրանոցի Իր հարկաբաժնում, մինչև հետմիջօրեի ժամը 2-ը ընդունեց ազգայինների մի պատվիրակություն, գլխավորությամբ պր. Հայկ Գավուգճյանի, պր. Տ. Տատուրյանի և պր. Շ. Սևհոնքյանի։

Ապա առաջնորդարանում, ժամը 2-ից հետո, ընդունեց թեմական խորհրդի, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության և այլ ազգային-եկեղեցական մարմինների ներկայացուցիչներին։

Ժամը 3.30-ին, Վեհափառ Հայրապետը, հատուկ հրավերի վրա, Իր շքախմբի ուղեկցությամբ, պաշտոնապես այցելեց Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների Եկեղեցիների ազգային խորհրդի նորակառույց կենտրոն պալատը, որտեղ գումարվում էր Եկեղեցիների ազգային խորհրդի տարեկան մեծ համագումարը։

Վեհափառ Հայրապետը ընդունվեց հարգալից հանդիսավորությամբ և առաջնորդվեց նիստերի դահլիճը, որտեղ Նա դիմավորվեց պատգամավորների բուռն ծափերով։ Բարի գալստյան և ողջույնի երկուստեք փոխանակված սրտագին խոսքերից հետո, ընդհանուր խանդավառության և ոգևորության մեջ, Վեհափառ Հայրապետը Եկեղեցիների ազգային խորհրդին նվիրեց Ս. Էջմիածնից բերված մարմարյա մի գեղեցիկ խաչքար։

Ժամը 5.30-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունեց Եկեղեցասեր հայ երիտասարդաց պատվիրակությանը, գլխավորությամբ շնորհունակ Արտաշես սարկավագ Դավիթյանի։

Վեհափառ Հայրապետը այցելության ընթացքում պատասխանելով պատգամավորության ջերմ, անկեղծ արտահայտություններին, օրհնեց բոլոր ներկաներին և տվեց հայրապետական Իր պատգամը։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը Իր շքախմբի հետ բարեհաճեց պատվել Նյու-Ջերսիում պր. Նուպար Տորյանի ընտանեկան հարկը և օրհնեց Իր պատվին կազմակերպված ընտանեկան սեղանը։

Հունիսի 2-ին, հինգշաբթի առավոտյան, հյուրանոցում, Վեհափառ Հայրապետը ընդունեց հայ ավետարանական համայնքի ներկայացուցիչ վերապատվելի Անդրանիկ Պետիկյանին և այլ ազգային հասարակական գործիչների։

Ճաշից հետո առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը ընդունեց հայ ավետարանական համայնքների հովիվներին, վերապատվելի Վարդգես Քասունու գլխավորությամբ։

Ժամը 6-ին Վեհափառ Հայրապետը պաշտոնապես այցելեց Նյու-Յորքի հայոց Ս. Խաչ եկեղեցին, որտեղ «Հրաշափառ»-ով հանդիսավորապես մուտք գործեց։ Եկեղեցու հովիվն է հոգեշնորհ Տ. Եղիշե ծայրագույն վարդապետ Սիմոնյանը։ Եկեղեցում և նրա շրջափակում հավաքված հավատացյալների հոծ բազմությունը խանդավառորեն դիմավորեց Իր սիրեցյալ Հովվապետին։

Արարողության վերջում, Վեհափառ Հայրապետը, բոլոր ներկաներին հաղորդելով Ս. Էջմիածնի օրհնությունն ու Իր հայրական ողջույնը, օրհնեց նրանց և տվեց Իր հայրապետական պատգամը։

Այնուհետև Նորին Ս. Օծությունը նախագահեց եկեղեցում թաղված ողբացյալ Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանի շիրմի վրա կատարված հոգեհանգստյան արարողության, մասնակցությամբ Իր շքախմբի։

Եկեղեցուց և հավատացյալներից հրաժեշտ առնելուց առաջ, Վեհափառ Հայրապետը եկեղեցուն նվիրեց Ս. Էջմիածնից բերված բազալտ քարից մի գեղեցիկ խաչքար։ Հանդիսության վերջում հավատացյալների հոծ բազմությունը մոտեցավ ի համբույր Վեհափառ Հայրապետի Ս. Աջի։

Նույն օրը երեկոյան Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով պատվեց Չարլզ Շաբարճյանի ընտանեկան հարկը, որտեղ Իր պատվին կազմակերպվել էր Հայկական սեղան։

Հունիսի 3-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 12-ին, Էմպայր Բիլդինգի շքեղ սրահում, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչությունը կազմակերպել էր պաշտոնական ընդունելություն Վեհափառ Հայրապետի պատվին։

Ընդունելության ներկա էին Վեհափառ Հայրապետի ամբողջ շքախումբը, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչությունը իր լրիվ կազմով, գլխավորությամբ վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանի և պր. Արշակ Գարակյոզյանի, ինչպես նաև թեմական ժողովի անդամներ և մասնավոր հրավիրյալներ։

Սեղանի շուրջ ստեղծվում է ջերմ, սիրալիր մթնոլորտ։ Վեհափառ Հայրապետին ողջունում են գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոսը, պր. Ալեքս Մանուկյանը, պր. Արշակ Գարակյոզյանը, վերապատվելի Անդրանիկ Պետիկյանը, պր. Տիգրան Պոյաճյանը և ուրիշներ։

Ընդունելության ընթացքում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, բարձրորեն գնահատում հայ կյանքում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության կատարած հոգևոր, ազգային և մշակութային նախախնամական դերը, ոգեկոչում նրա հանգուցյալ հիմնադիրների և բարերարների խնկելի հիշատակը, դրվատում ներկա ղեկավարության ազգօգուտ գործունեությունը և օրհնում Հայկական Բարեգործական

Ընդհանուր Միության անդամների ողջ բանակը, լավագույն բարեմաղթություններով ապագա փայլուն գործունեության համար։

Վեհափառ Հայրապետը, Իր այցելության բարեբաստիկ առիթով, այս ընդունելության ժամանակ Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ադամանդակուռ ոսկյա շքանշանով պարգևատրում է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության վետերան անդամներից պր. Արշակ Գարակյոզյանին։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Կենտրոնական վարչության նախագահ և Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշանակիր պր. Ալեքս Մանուկյանին նվիրում է Ս. Էջմիածնի մի գեղեցիկ գեղարվեստական նկարը։

Պաշտոնական այս ընդունելությունից հետո Վեհափառ Հայրապետը բարեհաճեց բարձրանալ Էմպայր Բիլդինգի 102-րդ հարկը և դիտել Նյու-Յորքի համայնապատկերը։

Նույն օրը ճաշից հետո, հյուրանոցում Վեհափառ Հայրապետը երկար զրույց ունեցավ մի խումբ ազգայինների հետ։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը, Իր շքախմբով, Հյուրը եղավ Թեմականի անդամ պր. Ֆրենկ Զոթյանի և օրհնեց նրա հացն ու աղը։

Ընթրիքից հետո Վեհափառ Հայրապետը ներկա եղավ Նյու-Յորքի հայոց Մայր Եկեղեցու մեծ սրահում երջանկահիշատակ Եղիշե Դուրյան պատրիարքի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսության։

Վեհափառ Հայրապետը խոսք առնելով, ոգեկոչեց Դուրյան պատրիարքի անմոռանալի հիշատակը, հանգամանորեն կանգ առավ մեծանուն պատրիարքի հոգևոր-բարոյական մեծ անձնավորության վրա։

Հունիսի 4-ին, շաբաթ, ժամը 10-ին, Լոնգ-Այլենդի հայոց Ս. Նահատակաց եկեղեցում եպիսկոպոսական սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազանը, իսկ քարոզեց Վեհափառ Հայրապետը։ Նորին Ս. Օծությունը եկեղեցուն նվիրեց Ս. Էջմիածնից բերված մարմարյա բանդակազարդ մի սիրուն խաչքար։

Եկեղեցուն կից սրահում կազմակերպվել էր պաշտոնական ճաշկերույթ Վեհափառ Հայրապետի պատվին, որին ներկա եղան ավելի քան 400 հոգի։ Սեղանի շուրջ արտասանվեցին ջերմ, հուզիչ ճառեր։ Ընդունելության վերջում հանդես եկավ Վեհափառ Հայրապետը տպավորիչ, ոգեշունչ ճառով, որն ունկնդրվեց լարված հետաքրքրությամբ և մեծ գոհունակությամբ։

Այս հանդիսավոր առիթով, Վեհափառ Հայրապետը պր. Տատուր Տատուրյանի կուրծքը զարդարեց Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ադամանդակուռ ոսկյա շքանշանով՝ առ ի գնահատություն նրա՝ թեմին և եկեղեցուն կատարած ազգօգուտ ծառայությունների։

Ավելի ուշ, երեկոյան, Տատուրյանների ընտանեկան հարկի տակ կազմակերպվել էր ջերմ ընդունելություն Վեհափառ Հայրապետի պատվին, որին ներկա էին ավելի քան 100 հրավիրյալներ՝ Տատուրյան ընտանիքի հարազատներ, բարեկամներ և պաշտոնական այլ հրավիրյալներ։

Հունիսի 5-ին, կիրակի առավոտյան հյուրանոցում Վեհափառ Հայրապետին այցելեցին զանազան հոսանքների պատկանող կարևոր գործիչներ։

Ժամը 4-ին Նյու-Յորքի Եպիսկոպոսական Սեյնտ Ջոն դը Դիվայն մեծ Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետը մատուցեց հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ, մեծահանդես շքեղությամբ և տպավորիչ վեհությամբ։

Ս. Սեղանին սպասարկում էին Տ. Մամբրե, Տ. Սիոն, Տ. Կոմիտաս սրբազանները, բազմաթիվ վարդապետներ, քահանա հայրեր և սարկավագներ։

Սուրբ պատարագի սրբազան երգեցողությունը կատարում էր Նյու-Յորքի հայոց եկեղեցիներից հավաքաբար կազմված ընտիր մի երգչախումբ, բաղկացած 200 հոգուց։

Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագին ներկա էր Նյու-Յորքի Եպիսկոպոսական Եկեղեցու պետ Տ. Հորաս Դոնեգան եպիսկոպոսը, զգեստավորված, անգլիկան եկեղեցականների Իր շքախմբով, որը ջերմորեն ողջունելով Ամենայն Հայոց Հայրապետին սուրբ պատարագի ընթացքում, բարի գալուստ մաղթեց Նրան, միաժամանակ ողջույնի իր խոսքի մեջ ծանրանալով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատմական դերի և լուսավոր առաքելության վրա հայ ժողովրդի կյանքում։

Իր քարոզի մեջ Վեհափառ Հայրապետը, քրիստոնեական սիրով ողջունելով Տ. Հորաս Դոնեգան եպիսկոպոսին, խոսեց Հայ և Անգլիկան Եկեղեցիների փոխհարաբերության և քրիստոնեական ոգով համագործակցության անհրաժեշտության վրա։ Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքը անգլերենի էր թարգմանում գերապատիվ Տ. Տիրան արքեպիսկոպոսը։ Այնուհետև Վեհափառ Հայրապետը Իր քարոզի շարունակության մեջ տվեց հայրապետական Իր ոգեորիչ պատգամը հայ ժողովրդին, Ս. Էջմիածնի խորհրդով ջերմացած և պայծառացած։

Քարոզի վերջում Վեհափառ Հայրապետը ի նշան Հայ և Եպիսկոպոսական Եկեղեցի-

ների եղբայրական սիրո, Տ. Հորաս Դոնեդան եպիսկոպոսին շնորհեց Ս. Էջմիածնից բերված եպիսկոպոսական մի ընտիր և թանկարժեք պանակ։

Հունիսի 5-ի հայրապետական այս հանդիսավոր սուրբ պատարագին ներկա էր ավելի քան 12 000 հոգի։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով, անցավ ժողովրդական ծովի միջով՝ հայրապետական Իր օրհնությունները սփռելով Իր ճանապարհի վրա։

Հունիսի 5-ի կիրակին Ամերիկայի հայ ժողովրդի նորագույն պատմության մեջ կանցնի որպես հավետ հիշատակելի և անմոռանալի փառավոր մի օր, Ամենայն Հայոց Հայրապետի շնորհաբեր այցելության քաղցր հուշերով և տպավորություններով զեղուն։

Հունիսի 6-ին, Երկուշաբթի, հյուրանոցի Իր հարկաբաժնում, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել պաշտոնական բազմաթիվ այցելություններ, որոնց թվում նաև այցելությունը Ամերիկայի Հայ Ազգային խորհրդի։

Ժամը 12-ին Վեհափառը Իր ներկայությամբ պատվեց Ամերիկայի հայ ծերունազարդ և մեծավաստակ մտավորական և հասարակական գործիչ պր. Վահան Քյուրքճյանի բնակարանը։

Ժամը 1-ին, Ս. Խաչ եկեղեցու սրահում, «Դստերք Վարդանանց» կազմակերպությունը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տվեց մեծ ճաշկերույթ, որի ընթացքում Վեհափառ Հայրապետին ողջունեցին կազմակերպության ավագ տպարապետուհի տիկին Աղավնի Թաթոսյանը և ուրիշներ։ Ընդունելության վերջում Վեհափառ Հայրապետը օրհնեց «Դստերք Վարդանանց» կազմակերպության բոլոր անդամներին, ցանկանալով նորանոր հաջողություններ նրանց ապագա գործունեության մեջ։

Ժամը 4-ին, Կոլումբիա համալսարանում կազմակերպվել էր պաշտոնական ընդունելություն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր պատվին։ Ընդունելությանը ներկա էին ավելի քան 150 ամերիկացի և հայ մտավորականներ, գիտնականներ, տարբեր մասնագիտության պրոֆեսորներ և մամուլի ներկայացուցիչներ։ Համալսարանի աստվածաբանական ամբիոնի վարիչ պրոֆ.-դոկտ. Լ. Բիկհամը, հանուն համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի, ջերմորեն ողջունում է Վեհափառ Հայրապետին։ Ամենայն Հայոց Հայրապետին ողջունում են նաև ուրիշ մտավորականներ։

Իր պատասխան շնորհակալական խոսքում, Վեհափառ Հայրապետը գիտական այս մեծ հաստատության, նրա ղեկավարներին և աշխատակիցներին հաղորդում է Ս. Էջմիածնի օրհնությունն ու ողջույնը։

Ընդունելության ժամանակ բոլոր ներկաների վրա մեծ տպավորություն է գործում մանավանդ Վեհափառ Հայրապետի խոսքը՝ Լեռան քարոզի սկզբունքների և գաղափարների լույսի տակ մտածված և ներկայացված։

Ժամը 7-ին, Նյու-Յորքի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում կայանում է Նյու-Յորքի շրջանի հայ հոգևորականության, ազգային-եկեղեցական մարմինների և հարակից կազմակերպությունների ընդհանուր խորհրդակցական ժողովը, որին մասնակցում է ավելի քան 400 հոգի։

Ողջունելով բոլոր պատգամավորներին, Վեհափառ Հայրապետը հանդես է գալիս Հայաստանի եկեղեցիներին, Մայր Աթոռի միաբանության, Հոգևոր Ճեմարանին և Մայր Աթոռում կատարված շինարարական աշխատանքներին նվիրված ընդարձակ զեկույցով։ Այս առթիվ Վեհափառ Հայրապետը պանակով պարգևատրեց գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոսին, իսկ գերաշնորհ Տ. Մամբրե և Տ. Տիրան արքեպիսկոպոսներին նվիրեց ձեռաց խաչ։

Ժամը 9.30-ին, «Վարդանանց ասպետներ» կազմակերպությունը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տալիս է մեծ ճաշկերույթ 500 հոգու մասնակցությամբ։ Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետին ջերմորեն ողջունում են ավագ սպարապետ Հերրի Կերտմենյանը և ուրիշներ։

Վեհափառը սիրով պատասխանում է բոլոր ճառախոսներին, օրհնում կազմակերպության բոլոր անդամներին և հաջողություն մաղթում նրանց ապագա գործունեության մեջ։

ՖԻԼԱԴԵԼՖԻԱՅՈՒՄ

Հունիսի 7-ին, Երեքշաբթի առավոտյան, Վեհափառ Հայրապետը Նյու-Յորքի հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունում է ազգային գործիչների այցելությունը։

Այնուհետև ժամը 5-ին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով գնացքով մեկնում է Ֆիլադելֆիա, ուր հասնում է ժամը 6-ին։ Կայարանում Վեհափառ Հայրապետը ընդունվում է կազմակերպված և ջերմ կերպով։ Կայարանում հավաքված բազմահազար հայությունը ջերմորեն ողջունում է իր սիրելի Հայրապետին։

Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվում է Ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցին, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով։ Կատարվում է Հայրապետական հանդիսավոր մաղթանք, որից հետո Վեհափառ

Հայրապետը տալիս է Իր օրհնությունն ու ողջույնը ժողովրդին։ Եկեղեցական արարողության ավարտին, բոլորը ջերմեռանդորեն մոտենում են ի համբույր Վեհափառ Հայրապետի Ս. Աջի։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Շերիդոն պանդոկը, որտեղ Նորին Ս. Օծության պատվին կազմակերպվել էր մեծ ընդունելություն, մասնակցությամբ ավելի քան 600 հրավիրյալների։

Պաշտոնական այս ընդունելության ներկա էին նաև քաղաքային և եկեղեցական պաշտոնական անձնավորություններ, հյուրեր, մամուլի ներկայացուցիչներ։ Ընդունելության ընթացքում Վեհափառ Հայրապետին հանուն քաղաքապետության ողջունում են պր. Դեն Լորանը և Ֆիլադելֆիա քաղաքի եկեղեցիների խորհրդի ատենապետ պր. Ուոլտեր Անտոնին, անգլիական Մաք-Դոնալտ եպիսկոպոսը, տեղի հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Լևոն քահանա Առաքելյանը և ուրիշներ։

Վերջում Վեհափառ Հայրապետը, ողջունելով բոլոր ներկաներին, շնորհակալություն է հայտնում և տալիս Իր պատգամը հայ ժողովրդին։

Հունիսի 8-ին, շաբաթի առավոտյան, Վեհափառ Հայրապետը պաշտոնապես այցելեց Ֆիլադելֆիա քաղաքի պատմական և տեսարժան վայրերը։

Ֆիլադելֆիան Միացյալ Նահանգների առաջին մայրաքաղաքն է եղել։

Նորին Ս. Օծությունը ապա այցելություն տվեց Միացյալ Նահանգներում անգլիական առաջին եկեղեցուն։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը այցելեց այն տուն-թանգարանը, որտեղ հռչակվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների ազգային անկախությունը և ստորագրվել առաջին Սահմանադրությունը։ Այստեղ է գտնվում նաև այն պատմական Ազատության զանգը, որը առաջինը ավետեց ամերիկյան ժողովրդի անկախության հռչակումը։

ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ

Հունիսի 8-ին, շաբաթի օրը, հետմիջօրեին, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Իր շքախմբի, գնացքով մեկնեց ԱՄՆ-ի այժմյան մայրաքաղաքը՝ Վաշինգտոն։

Ժամը 8-ին գնացքը մոտեցավ կառամատույցին, որտեղ հավաքված հոծ բազմությունը, գլխավորությամբ տեղական ազգային-եկեղեցական մարմինների և հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Գարեգին վարդապետ Գազանճյանի, խանդավառորեն դիմավորեց Վեհափառ Հայրապետին։

Նորին Ս. Օծությունը հանդիսավոր շքերթով առաջնորդվեց Վաշինգտոնի Հայոց եկեղեցին, ուր մուտք գործեց «Հրաշափառ»-ով և նախագահեց Հայրապետական մաղթանքին։

Եկեղեցական արարողության ավարտին, Վեհափառ Հայրապետը, ողջունելով Իր հոգևոր զավակներին, տվեց հայրապետական Իր պատգամը։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով հյուրասիրվեց մայրաքաղաքի ամենաընտիր հյուրանոցներից մեկում՝ Շորհեմ պանդոկում։

Հունիսի 9-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, Իր շքախմբով և Վաշինգտոնի հայ համայնքի ազգային-եկեղեցական մարմինների ընկերակցությամբ, պաշտոնապես այցելելով ամերիկյան Անհայտ զինվորի հուշարձանին, փառավոր պսակ դրեց։

Այնուհետև Նորին Ս. Օծությունը այցելեց ԱՄՆ-ի առաջին պրեզիդենտ Ջորջ Վաշինգտոնի և 1860-ական թվականներին ԱՄՆ-ում ստրկատիրության դեմ պայքարող, մեծ հումանիստ և ԱՄՆ-ի պրեզիդենտ Աբրահամ Լինկոլնի արձաններին։

Կեսօրին, մայրաքաղաքի հայ համայնքը կազմակերպեց մեծ ընդունելություն ի պատիվ Վեհափառ Հայրապետի։

Ճաշկերույթից հետո Վեհափառ Հայրապետը ընդունեց բազմաթիվ ազգայինների այցելությունը։

Այնուհետև կազմակերպվեց հայ մամուլի ասուլիս։

Վեհափառ Հայրապետը միաժամանակ ընդունեց ամերիկյան ռադիոյի և հեռուստատեսության ընկերությունների թղթակիցներին։

Ամեն տեղ ամերիկյան մամուլը, ռադիոն և հեռուստատեսությունը պրես-կոնֆերանսների միջոցով լայնորեն արձագանքում էին Ամենայն Հայոց Հայրապետի ԱՄՆ-ում կատարած հովվապետական այցելության։

Երեկոյան ժամը 7-ին կազմակերպվեց ավելի մեծ ճաշկերույթ Վեհափառ Հայրապետի պատվին, մասնակցությամբ 300 հրավիրյալների։ Ճաշկերույթին ներկա եղավ նաև Վաշինգտոնի մերձակա Ռիչմոնդի հայ համայնքից մի մեծ պատգամավորություն։

Վեհափառ Հայրապետի բարձր պատվին կազմակերպված պաշտոնական ընդունելության այս սեղանը ղեկավարեց Վաշինգտոնի Հարվորտ համալսարանի պրոֆեսոր, հայ մանրանկարչության մեծավաստակ մասնագետ օրիորդ Սիրարփի Տեր-Ներսեսյանը։

Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետին ողջունեցին մայրաքաղաքի քաղաքագլուխ պր. Ռոբերտ Մեկլատոնը, հայ և օտար բարձրաստիճան հոգևորականներ, պետական պաշտոնական անձնավորություններ և մամուլի ներկայացուցիչներ։

Ընդունելության վերջում հանդես գալով, Վեհափառ Հայրապետը խոսեց ոգեշունչ ճառ։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, բոլոր ներկաների որոտագին ծափերի և խանդավառ բացականչությունների տակ, պրոֆեսոր օրիորդ Սիրարփի Տեր-Ներսեսյանի կրծքից կախեց Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ադամանդակուռ ոսկյա շքանշանը, առ ի բարձր գնահատություն նրա՝ հայ մշակույթին և արվեստին մատուցած շնորհակալ ծառայությունների։

Հանդիսության վերջում բոլոր ներկաները մոտեցան ի համբույր Վեհափառ Հայրապետի Ս. Աջի և ստացան Ս. Էջմիածնից բերված և Վեհափառի Ս. Աջով բաշխված խաչիկներ, որպես խորհրդանշանը Ս. Էջմիածնի սրբությունների։

Հունիսի 10-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 10—11-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այցելեց Վաշինգտոնի պետական մատենադարանը, որտեղ պահվում են նաև հայ մանրանկարչության վերաբերյալ մի շարք արժեքավոր, ընտիր հին ձեռագրեր Կիլիկյան շրջանից, գործ ԺԲ—ԺԳ դարերի։

Այնուհետև, ժամը 11-ին, Վաշինգտոնի քաղաքապետարանում կազմակերպվել էր պաշտոնական ընդունելություն, որտեղ քաղաքագլուխ պր. Ռոբերտ Մեկլատոնը, հանդիսավոր իրադրության մեջ, Վեհափառ Հայրապետին հռչակելով Վաշինգտոնի պատվավոր քաղաքացի, Նորին Ս. Օծության հանձնում է մայրաքաղաքի բանալին։

Ժամը 12-ին Վաշինգտոնի Եկեղեցասեր հայ տիկնանց միությունը կազմակերպում է ընդունելություն, որտեղ Վեհափառ Հայրապետը օրհնում է միության անդամներին, տալով Իր պատգամը։

Ժամը 3-ին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով գնացքով վերադառնում է Ֆիլադելֆիա, որտեղ հասնելով ժամը 5-ին, «Հրաշափառ»-ով առաջնորդվում է Ֆիլադելֆիայի հայոց երկրորդ՝ Ս. Երրորդություն եկեղեցին, որի հովիվն է արժանապատիվ Տ. Սարգիս քահանա Գաշրբճյանը։

Նորին Ս. Օծությունը, Հայրապետական մաղթանքից հետո, օրհնում է բոլոր ներկաներին և Իր պատգամը տալուց հետո բաժանում է խաչիկներ։

Վերջում բոլոր հավատացյալները Վեհափառ Հայրապետի Ս. Աջը համբուրելով ստանում են Նրա օրհնությունը։

Հունիսի 11-ին, շաբաթ, ժամը 1-ին, Վեհափառ Հայրապետը Իր բարձր ներկայությամբ պատվեց ընտանեկան հարկը Ֆիլադելֆիայի Ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Լևոն քահանա Առաքելյանի, որտեղ, ի պատիվ Նրան, տրվեց ճաշկերույթ։

ԲՈՍՏՈՆՈՒՄ

Հունիսի 11-ին, շաբաթ օրը, ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը, Իր շքախմբի ուղեկցությամբ, ինքնաթիռով մեկնեց Բոստոն։

Քաղաքի օդանավակայանում Վեհափառ Հայրապետը դիմավորվեց արտակարգ խանդավառությամբ և ջերմությամբ։ Օդանավակայան էր եկել համայնքի ողջ հույությունը հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Բաբգեն քահանա Մաքսուտյանի գլխավորությամբ, ընդունելու Վեհափառ Հայրապետին։

Վեհափառ Հայրապետը ոստիկանական շքերթով և բազմաթիվ մեքենաների շարասյունով առաջնորդվեց Բոստոնի հայոց Ս. Երրորդություն եկեղեցին, ուր անհամբեր սպասում էր ծովածավալ բազմությունն։

Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով հանդիսավորապես մուտք գործեց եկեղեցի։ Եկեղեցական արարողության վերջում Վեհափառ Հայրապետը բոլոր ներկաներին ողջունելով և օրհնելով, տվեց Իր հայրապետական պատգամը, որին հաջորդեց մոտ մի ժամ տևող աջահամբույրը։

Այնուհետև Նորին Ս. Օծությունը առաջնորդվեց «Ստատլեր Հիլտոն» հյուրանոցը, որտեղ տրվեց ճաշկերույթ Վեհափառ Հայրապետի պատվին, գլխավորությամբ ընդունելության հանձնաժողովի նախագահ գեներալ Սարգիս Զարդարյանի և Խաչիկ Կոշկարյանի։

Ընդունելության ընթացքում շատերը ելույթներ ունեցան, ջերմագինս ողջունելով Վեհափառ Հայրապետի օրհնաբեր այցելությունը Բոստոնի հայ համայնքին։

Վերջում խոսք առավ Վեհափառ Հայրապետը և քահանայական լանջախաչով պատվեց արժանապատիվ Տ. Բաբգեն քահանա Մաքսուտյանին և Ուոտերտաունի հայոց Ս. Հակոբ եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Արտեն քահանա Աշճյանին։

Հունիսի 12-ին, կիրակի, Վեհափառ Հայրապետը հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Բոստոնի Սեյնտ Պոլ եպիսկոպոսական եկեղեցում։

Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագին ներկա էին ողջ Բոստոնի և շրջակայքի հայ համայնքների հոգևոր հովիվներն ու հայությունը, ինչպես նաև Եպիսկոպոսական Եկեղեցու ներկայացուցչությունը։

Սուրբ պատարագի ընթացքում Վեհափառ Հայրապետը խոսեց ոգեշունչ քարոզ։

Սուրբ պատարագից հետո Վեհափառ Հայրապետի պատվին տրվեց ճաշկերույթ եկեղեցու սրահում։

Երեկոյան ժամը 7 30-ին, հյուրանոցի շքեղ դահլիճում, Բոստոնի հայ համայնքը, ի պա-

տիվ Նորին Ս. Օծության, կազմակերպել էր փառահեղ ընդունելություն, որին մասնակցում էին ավելի քան 1200 հայ և օտար պաշտոնական հրավիրյալներ։

Սեղանը վարում էր թեմական խորհրդի անդամ պր. Տիգրան Պոյաճյանը։

Ընդունելության ժամանակ, Վեհափառ Հայրապետին ջերմորեն ողջունելով, Բոստոնի քաղաքագլուխը Նորին Ս. Օծության նվիրում է քաղաքապետարանի անունից արծաթյա հուշանվեր։

Ճաշկերույթի վերջում հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը ընդարձակ և բովանդակալից ճառով։

Հունիսի 13-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 10-ին, հյուրանոցի Իր հարկաբաժնում, Վեհափառ Հայրապետը ընդունում է Բոստոնի հայ ավետարանական համայնքի և ազգային-եկեղեցական այլ կազմակերպությունների այցելությունները։

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Բոստոնի մերձակա Լաուրենս քաղաքի հայոց Ս. Խաչ եկեղեցին, որտեղ մուտք է գործում «Հրաշափառ»-ով։ Եկեղեցում հավաքված հավատացյալներին ողջունելով և օրհնելով, Վեհափառ Հայրապետը տալիս է Իր պատգամը։ Վերջում տեղի է ունենում աջահամբույր։

Եկեղեցու հովիվն է արժանապատիվ Տ. Վարդան քահանա Ավագյանը։

Ի պատիվ Վեհափառ Հայրապետի Լաուրենսի հայ համայնքը կազմակերպում է ընդունելություն։

Ժամը 6.30-ին Նորին Ս. Օծությունը, շարունակելով Իր ուղևորությունը Բոստոնի շրջանում, այցելում է Ուոտերտաուն քաղաքի հայ համայնքի Ս. Հակոբ եկեղեցին։ Եկեղեցու հոգևոր հովիվն է արժանապատիվ Տ. Արտեն քահանա Աշճյանը։

Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք է գործում եկեղեցի։ Հայրապետական մաղթանքից հետո, Նորին Ս. Օծությունը օրհնում է բոլորին և տալիս Իր պատգամը։

Ուոտերտաունում Վեհափառ Հայրապետը արժանանում է բացառիկ խանդավառ ընդունելության։ Համայնքը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպում է ընդունելություն։

Ընդունելության վերջում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և օրհնում բոլորին։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Իր ներկայությամբ պատվել թեմական ատենապետ պր. Տիգրան Պոյաճյանի ընտանեկան հարկը և օրհնում նրա սեղանի աղն ու հացը։

Գիշերվա ժամը 10-ին Ուոտերտաունի հայոց Ս. Հակոբ եկեղեցու կից մեծ սրահում տեղի է ունենում գեղարվեստական-գրական երեկո՝ Վեհափառ Հայրապետի պատվին։

Հայ մանուկներ և փոքր տարիքի հայ դրպրոցականներ երգում, արտասանում են Վեհափառ Հայրապետի ներկայության, մեծ գոհունակություն պատճառելով Նրան։

Հանդեսի վերջում Վեհափառ Հայրապետը հայ մանուկներին ողջունում է հուզումով, նրանց ուղղած ջերմ, հայրական սրտագին խոսքերով և օրհնում բոլորին։

Հունիսի 14-ին, երեքշաբթի, առավոտյան ժամերին, Վեհափառ Հայրապետը հյուրանոցում ընդունում է համայնքի բազմաթիվ ազգայինների այցելությունները։

Ժամը 12-ին, Քեմբրիջի Հարվորտի համալսարանում, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, կազմակերպվել էր ջերմ ընդունելություն, համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի կողմից։

Վեհափառ Հայրապետին ողջունում է Քեմբրիջի համալսարանի աստվածաբանական ամբիոնի վարիչ պրոֆ.-դոկտ. Սամվել Միլլերը։

Ելույթ ունենալով, Վեհափառ Հայրապետին ողջունում են նաև համալսարանի հայ դասախոս պրոֆ. Ա. Սանճյանը, լեզվագրական ֆակուլտետի դեկան Ջոշուա Ուաթմենը և ուրիշներ։

Ընդունելության վերջում բոլոր ճառախոսների ողջույնի խոսքերին պատասխանում է Վեհափառ Հայրապետը, միաժամանակ շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության և արտահայտված հարգանքի անկեղծ խոսքերի համար։

ՊՐՈՎԻԴԵՆՍՈՒՄ

Հունիսի 14-ին, երեքշաբթի, երեկոյան ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը, Իր շքախմբի ուղեկցությամբ, ինքնաթիռով մեկնեց Պրովիդենս։

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետը ընդունվեց բացառիկ, ջերմ խանդավառությամբ։

Հանդիսավոր շքերթով Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց հայոց Ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցին, ուր մուտք գործեց «Հրաշափառ»-ով։

Պրովիդենսի հայոց եկեղեցու հոգևոր հովիվն է արժանապատիվ Տ. Հայկ քահանա Տոնիկյանը։

Եկեղեցում և շրջափակում հավաքվել էր արտասովոր բազմություն՝ ոգևորությամբ ողջունելու Վեհափառ Հայրապետի բարի գալուստը։

Հայրապետական մաղթանքից հետո Նորին Ս. Օծությունը տվեց Իր քարոզ-պատգամը, հայրապետական օրհնությունը և բոլոր

ներկաներին բաժանեց Էջմիածնի խաչիկներ։

Արարողության վերջում տեղի ունեցավ աջահամբույր։

Վեհափառ Հայրապետը, ի հիշատակ Իր այցելության, Պրովիդենսի հայոց Ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցուն նվիրեց սկիհ և խաչ։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը օրհնեց եկեղեցուն կից կառուցվող Հայ մշակութային տան հիմնաքարը։

Պրովիդենսի հայոց մշակութային այս տունը կառուցվում է թեմական խորհրդի անդամ պր. Զարեհ Եկավյանի և նրա եղբայրների նվիրատվությամբ։

Եկեղեցու շրջափակում կատարված այս հանդիսություններից հետո Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է «Շերիդոն» հյուրանոցը։

Հյուրանոցում կազմակերպվում է տեղական մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության թղթակիցների պրես-կոնֆերանս։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԶՈՐԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ԶԱՐԴԱՐՅԱՆԻ ՀԵՏ

Երեկոյան ժամը 8-ին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Պրովիդենսի հայ համայնքը կազմակերպում է մեծ ընդունելություն, որին մասնակցում է ավելի քան 800 հոգի։

Ընդունելության ընթացքում արտասանվում են հուզիչ բաժակաճառեր և ուղերձներ։ Վերջում հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը մեծ ելույթով, օրհնում բոլոր ներկաներին և համայնքին և տալիս Իր պատգամը։

Հունիսի 15-ին, շաբաթի, առավոտյան ժամերին, Վեհափառ Հայրապետը Պրովիդենսի հյուրանոցում բարեհաճում է ընդունել բազմաթիվ կազմակերպությունների ներկայացուցիչների և առանձին ազգայինների այցելությունը։

Կեսօրին, Զաքեհ և Գրիգոր Եկավյան եղբայրները Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպում են ընդունելություն Պիչբորգի ծովափնյա հյուրանոցում։ Երեկոյան ժամը 5-ին Վեհափառ Հայրապետը վերադառնում է Բոստոն։

Ավելի ուշ Վեհափառ Հայրապետը այցելում է Բոստոնի հայոց նոր կառուցվող Ս. Երրորդություն եկեղեցին, որը դեռ շինարարական ընթացքի մեջ է։

Ապա Նորին Ս. Օծությունը հովվատան մեջ ընդունում է այցելությունը բազմաթիվ ազգայինների, մտավորականների, որոնց թվում գրող Համաստեղի և հրապարակագիր Սիրվարդի։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը օրհնում է արժանապատիվ Տ. Բարգեն քահանա Մաքսուտյանի սեղանը, եկեղեցուն կից հովվատան մեջ։

Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետը նոր կառուցվող եկեղեցուն նվիրում է մի սիրուն խաչքար։

Հունիսի 16-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 9-ին, հատուկ հրավերով Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով մասնակցեց Հարվորդի համալսարանի տարեվերջի բացօդյա մեծ հանդեսին, որին ներկա էին ավելի քան 15 000 հրավիրյալներ։

Ժամը 1-ին Նորին Ս. Օծությունը օրհնեց Կյուլեսերյան եղբայրների բնակարանում Իր պատվին կազմակերպված ընտանեկան սեղանը։

ՈՒՍՏՐՈՒՄ

Հունիսի 16-ին, հինգշաբթի, ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբի հետ մեկնեց Ուստր, ուր հասավ ժամը 5.30-ին։

Ուստրի հայոց Ս. Փրկիչ եկեղեցում հավաքվել էր հոծ բազմություն՝ Վեհափառ Հայրապետին դիմավորելու համար։

Ուստրի հայ համայնքը, տեղի հոգևոր հովիվ Տ. Եղիշե վարդապետ Կիզիրյանի գլխավորությամբ, ջերմորեն դիմավորեց Նորին Ս. Օծությանը։ Հայ մանուկների երգի, պարի խմբեր, հայկական տարազներ հագած, վարդեր ու ծաղիկներ էին շաղ տալիս Վեհափառ Հայրապետի ճանապարհի վրա։

Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք գործեց եկեղեցի, օրհնեց ժողովրդին, քարոզեց և խաչիկներ բաժանեց։ Վերջում տեղի ունեցավ աջահամբույր։

Ընդունելության ներկա էր նաև Ուստրի քաղաքապետը, որը ջերմորեն ողջունելով Վեհափառ Հայրապետին, հանդիսավորապես հանձնեց քաղաքի բանալին՝ Նորին Ս. Օծությանը հռչակելով քաղաքի պատվավոր քաղաքացի։

Հանդիսության վերջում Վեհափառ Հայրապետը եկեղեցուն նվիրեց սկիհ, իսկ հոգևոր հովիվ Տ. Եղիշե վարդապետ Կիզիրյանին պարգևատրեց վարդապետական լանջախաչով։

Երեկոյան, Ուստրի հայոց համայնքը Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպել էր ընդունելություն ավելի քան 1 000 հոգու մասնակցությամբ։ Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետը Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ոսկյա ադամանդակուռ շքանշանով զարդարեց Մայր Աթոռի բարերար գեներալ Սարգիս Զարդարյանի կուրծքը։

Գեներալ Զարդարյանը ստանձնել է Ս. Գեղարդի վանքի վերանորոգության ծախսը։

ՆՅՈՒ-ՅՈՐՔՈՒՄ

Հունիսի 17-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը, Իր շքախմբի ուղեկցությամբ, Բոստոնից ինքնաթիռով վերադարձավ Նորից Նյու-Յորք, «Ուալդորֆ Աստորիա» հյուրանոցը։

Ապա Վեհափառ Հայրապետը պանդոկի Իր հարկաբաժնում ընդունեց բազմաթիվ ազգայինների այցելությունը։

Առաջնորդարանում ժամը 5-ին Վեհափառ Հայրապետը նախագահեց ԱՄՆ-ի հայոց մի շարք հայրենակցական միությունների միացյալ նիստին, տալով հայրապետական Իր ողջույնն ու պատգամը։

Երեկոյան եկեղեցու մեծ սրահում կազմակերպվել էր գեղարվեստական երեկո, որին ներկա էր հոծ բազմություն։

Երեկոյի ընթացքում Վեհափառ Հայրապետը հանդես եկավ Մայր Հայրենիքի մշակութային, գրական և գեղարվեստական կյանքին նվիրված բովանդակալից դասախոսությամբ։

Հունիսի 18-ին, շաբաթ առավոտյան, հյուրանոցի Իր հարկաբաժնում, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել Նյու-Յորքի ռադիոյի հայկական բաժնի թղթակիցներին։ Ասուլիսի ժամանակ ձայնագրվեցին Վեհափառ Հայրապետի պատասխաններն ու թղթակիցների հարցերը։

ԴԻՏՐՈՅՏՈՒՄ

Հունիսի 18-ին, շաբաթ, Իր շքախմբի ուղեկցությամբ, Վեհափառ Հայրապետը ինքնաթիռով մեկնեց Դիտրոյտ։

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետը արժանացավ սրտագին, արտակարգ ընդունելության, որը կազմակերպել էր Դիտրոյտի հայ համայնքը, հոգևոր հովիվներ արժանապատիվ Տ. Առնակ քահանա Գասպարյանի և արժանապատիվ Տ. Տիրան քահանա Փափազյանի գլխավորությամբ։

Վեհափառ Հայրապետը, հանդիսավոր շքերթով և ոստիկանական պատվո խմբի ուղեկցությամբ, առաջնորդվեց Հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, որտեղ մուտք գործեց «Հրաշափառ»-ով։

Ապա ողջունելով բոլորին, Նորին Ս. Օծությունը օրհնեց ներկաներին՝ տալով հայրապետական Իր պատգամը։

Վերջում բոլոր հավատացյալները մոտեցան ի համբույր Վեհափառ Հայրապետի Ս. Աջի։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց «Ստադլեր» հյուրանոցը, որտեղ երեկոյան, Նորին Ս. Օծության բարձր պատվին, կազմակերպվեց մի ընդունելություն, ավելի քան 1 000 հրավիրյալների մասնակցությամբ։

Պաշտոնական ճաշի ժամանակ արտասանվեցին հուզիչ ճառեր, առաջարկվեցին թանկագին կենացներ։

Վերջում խոսք առավ Վեհափառ Հայրապետը և Իր ոգեշունչ պատգամը տվեց բոլոր ներկաներին։

Նույն օրը ժամը 2-ին, Վեհափառ Հայրապետը հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Դիտրոյտի եպիսկոպոսական Մայր Տաճարում։

Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագին ներկա էր հոծ բազմություն, ավելի քան 4 000 հոգի։

Սուրբ պատարագին ներկա էին նաև, ինչպես միշտ նման առիթներով, Դիտրոյտի Եպիսկոպոսական Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ և քույր եկեղեցիների այլ ներկայացուցիչներ։

Ժամը 7-ին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանը, Իր ընտանեկան հարկի տակ, Վեհափառ Հայրապետին ողջունելու և հյուրասիրելու ուրախությունն ունեցավ։

Ընտանեկան այս սրտագին ընդունելության ներկա էին բազմաթիվ պաշտոնական այլ հրավիրյալներ։

Հունիսի 20-ին, երկուշաբթի առավոտյան, Վեհափառ Հայրապետը, Իր շքախմբի ուղեկցությամբ, այցելեց Դիտրոյտ քաղաքի տեսարժան վայրերը և եղավ Ֆորդի ավտոմոբիլաշինական գործարանում։

Ժամը 1-ին, Դիտրոյտի Եկեղեցասեր հայ տիկնանց միությունը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպել էր ընդունելություն՝ Դիտրոյտի հայոց Հայ մշակութային տանը։ Ընդունելության ժամանակ արտասանվեցին ջերմ ճառեր, եղան արտասանություններ և մենակներգեր։

Վերջում ելույթ ունեցավ Վեհափառ Հայրապետը հայ մայրերին ուղղված և տվեց Իր պատգամը ընդհանրապես հայ իգական սեռին և օրհնեց միության անդամներին։

Երեկոյան «Ստադլեր» հյուրանոցում տրվեց ճաշկերույթ Վեհափառ Հայրապետի պատվին, որին մասնակցեցին նաև շրջանի հոգևոր հովիվներ, եկեղեցական խորհուրդների և տեղական ազգային մարմինների ներկայացուցիչներ և հյուրեր։

Ժամը 9-ին, Դիտրոյտի հայ մտավորականությունը Հայ մշակութային տանը կազմակերպել էր գրական-գեղարվեստական հանդիպում, Վեհափառ Հայրապետի պատվին։

Հանդեսի ժամանակ Վեհափառ Հայրապետը տալով Իր պատգամը, Դիտրոյտի հայոց նոր կառուցվող եկեղեցուն նվիրեց Ս. Էջմիածնից բերված մի սիրուն խաչքար, իսկ Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ոսկյա ադամանդակուռ շքանշանով պարգևատրեց պր. Եդվարդ Մարտիկյանին, որն ստանձնել է Հաղարծինի վանքի վերանորոգության ծախսերը։

ԳԼԻՎԼԵՆԴՈՒՄ

Հունիսի 21-ին, երեքշաբթի, Վեհափառ Հայրապետը ինքնաթիռով Դիտրոյտից մեկնեց Գլիվլենդ։

Գլիվլենդի հայ համայնքը փոքրաթիվ է և մինչև այժմ էլ չունի իր եկեղեցին։ Տեղի ազգապատկան հողի վրա կառուցվել է Մշակութային տուն, ուր և տեղի ունեցավ ընդունելությունը, կազմակերպված եկեղեցական խորհրդի կողմից, գլխավորությամբ խորհրդի ատենապետ դոկտ. Գեղամ Կյոքճյանի։

Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով առաջնորդվեց Մշակութային տուն և օրհնելով փոքրաթիվ հայ գաղութը, տվեց Իր պատգամը։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հյուրասիրվեց թեմական խորհրդի ատենապետ պր. Երվանդ Աղաճանյանի բնակարանում։

Հունիսի 22-ին, շաբաթի, Վեհափառ Հայրապետը նախագահեց Գլիվլենդի հայ տիկնանց կողմից Իր պատվին տրված ճաշկերույթին և ելույթ ունենալով օրհնեց միության անդամներին։

ՏՈՐՈՆՏՈՅՈՒՄ (ԿԱՆԱԴԱ)

Հունիսի 23-ին, հինգշաբթի, Վեհափառ Հայրապետը Գլիվլենդից ինքնաթիռով մեկնեց Տորոնտո (Կանադա)։

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր Իր պատվո շքախումբը։

Տորոնտոն ունի փոքրաթիվ հայ գաղութ, բաղկացած շուրջ 300 հայ ընտանիքներից։

Հայ համայնքը, հոգևոր հովիվ Տ. Վազգեն վարդապետի և հոգաբարձության ատենապետ պր. Գրիգոր Էլմասյանի գլխավորությամբ, բացառիկ ջերմությամբ ընդունեց Վեհափառ Հայրապետին։

Նորին Ս. Օծությունը «Հրաշափառ»-ով առաջնորդվեց եկեղեցի և տվեց Իր ողջույնն ու պատգամը։

Վերջում Վեհափառ Հայրապետը վարդապետական լանջախաչով պարգևատրեց հոգևոր հովվին, եկեղեցուն նվիրեց սուրբ սկիհ, իսկ հավատացյալներին բաժանեց Ս. Էջմիածնի խաչիկներ։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը նախագահեց Տորոնտոյի հայ համայնքի հոգաբարձության ժողովին։

Հունիսի 24-ին, ուրբաթ առավոտյան, Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամները, Տորոնտոյի հայ համայնքի հոգաբարձության ատենապետի ուղեկցությամբ, գնացին Նիագարայի ջրվեժը՝ Նիագարա-Ֆոլս։

Ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Տորոնտոյի նահանգապետին։

Ժամը 12-ին Նորին Ս. Օծությունը օրհնեց տիկին Ֆերուզ Պապայանի սեղանը, նրա բնակարանում։

Երեկոյան Տորոնտոյի հայ համայնքը Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպեց մեծ ընդունելություն «Ռոյալ ռոկ» սրահում։

Ընդունելության ժամանակ արտասանվեցին բազմաթիվ բաժակաճառեր։

Վերջում Վեհափառ Հայրապետը, օրհնելով բոլոր ներկաներին, տվեց հայրապետական Իր պատգամը։

ՉԻԿԱԳՈՅՈՒՄ

Հունիսի 25-ին, շաբաթ, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը ինքնաթիռով մեկնեց Չիկագո, ուր հասավ ժամը 1-ին և առաջնորդվեց հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, ուր մուտք գործեց «Հրաշափառ»-ով։

Չիկագոյի հայ համայնքը, գլխավորությամբ հոգևոր հովիվներ հոգեշնորհ Տ. Վարուժան վարդապետ Գապարաճյանի և արժանապատիվ Տ. Վրթանես ավագ քահանա Փափազյանի, ջերմորեն ընդունեց Վեհափառ Հայրապետին։

Նորին Ս. Օծությունը ողջունելով ժողովրդին, օրհնեց և տվեց Իր պատգամը։

Երեկոյան Չիկագոյի հայ համայնքը կազմակերպեց մեծ ընդունելություն Վեհափառ Հայրապետի պատվին, մասնակցությամբ ավելի քան 800 հրավիրյալների։

Պաշտոնական ճաշից առաջ, Վեհափառ Հայրապետը աջահամբույրի ժամանակ բաժանեց Ս. Էջմիածնի խաչիկներ։

Ընդունելության ժամանակ ներկաներից շատերը դեղեցիկ ճառերով ողջունեցին Վեհափառ Հայրապետին։

Վերջում Վեհափառ Հայրապետը, պատասխանելով բոլոր ուղերձներին, հանդես եկավ ճառով։

Հունիսի 26-ին, կիրակի, ժամը 2-ին, Վեհափառ Հայրապետը Չիկագոյի եպիսկոպոսական Մայր Տաճարում մատուցեց հանդիսավոր սուրբ պատարագ, հավատացյալների խուռն բազմության ներկայությամբ։

Սուրբ պատարագին ներկա էին մոտ 400 հոգի՝ եպիսկոպոսական և այլ քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, պետական պաշտոնական անձնավորություններ։

Սուրբ պատարագի ընթացքում ողջույնի ջերմ խոսք ասաց Չիկագոյի Եպիսկոպոսական Եկեղեցու պետ եպիսկոպոսը։

Երեկոյան ժամը 8-ին Վեհափառ Հայրապետը ընդունեց Չիկագոյի համայնքի Եկեղեցասեր հայ երիտասարդաց կազմակերպությունների ներկայացուցիչներին։

Գիշերը պր. Վոլտեր Վարդանը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպեց ընդունելություն, որին ներկա եղան նաև բազմաթիվ այլ հրավիրյալներ։

Հունիսի 27-ին, երկուշաբթի առավոտյան, Վեհափառ Հայրապետը այցելեց պր. Վոլտեր Վարդանի ցինկոգրաֆիական գործարանը։

Այս ուրախ առիթով պր. Վոլտեր Վարդանը Ս. Էջմիածնի տպարանին նվիրեց կլիշներ պատրաստող նորագույն մի մեքենա։

Ժամը 2-ին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով մեկնեց Ռոգեկոն քաղաքը, ուր «Հրաշափառ»-ով առաջնորդվեց եկեղեցի, ողջունեց հավատացյալ հայ ժողովրդին և օրհնելուց հետո բաժանեց Ս. Էջմիածնի խաչիկներ։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը շարունակելով իր ուղևորությունը, այցելեց Էվեն-

տոն քաղաքը, Չիկագոյի մոտ մի փոքր քաղաք, և «Հրաշափառ»-ով առաջնորդվեց եկեղեցի։ Ապա Նորին Ս. Օծությունը օրհնելով հայ համայնքին, տվեց Իր պատգամը և Ս. Էջմիածնի խաչիկներ բաժանեց։

Ժամը 8-ին Ուոկեգոն և Էվենստոն քաղաքների հայ համայնքների եկեղեցական խորհուրդը «Ջորջիա» հյուրանոցում մեծ ճաշկերույթ կազմակերպեց Վեհափառ Հայրապետի պատվին։

Վերջում ելույթ ունեցավ Վեհափառ Հայրապետը։

Ուշ գիշերին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով վերադարձավ Չիկագո։

Հունիսի 28-ին, երեքշաբթի, ժամը 2-ին, Վեհափառ Հայրապետը այցելեց Չիկագոյի մերձակա մի այլ քաղաքի՝ Ռեյսինի հայ համայնքին։

Համայնքը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպեց սիրալիր ընդունելություն, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը ողջունեց փոքրաթիվ հայ գաղութին, օրհնեց բոլորին և տվեց Իր պատգամը։

Վեհափառ Հայրապետը գիշերեց Ռեյսինում։

Հունիսի 29-ին, չորեքշաբթի, Վեհափառ Հայրապետը ինքնաշարժով մեկնեց Միլուոկի քաղաքը։ Փոքրաթիվ հայ համայնքը ջերմորեն դիմավորելով Վեհափառ Հայրապետին, Նրա պատվին տվեց ընդունելություն։

Վեհափառը օրհնեց բոլորին և Իր պատգամը տվեց։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը այցելեց Հարավային Միլուոկիի հայ համայնքի Ս. Հարություն եկեղեցին և ողջունելով ու օրհնելով նույնպես տեղի փոքրաթիվ հայ համայնքին, ժամը 9-ին վերադարձավ Չիկագո, որտեղ ժամը 10-ին Նորին Ս. Օծության պատվին կազմակերպվել էր ընդունելություն։

Ընդունելության ժամանակ Չիկագոյի հայ համայնքի անդամ պր. Իփճյանը Վեհափառ Հայրապետին նվիրեց մի ավտոմեքենա։

Հունիսի 30-ին, հինգշաբթի կեսօրին, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց պատվել պր. Վոլտեր Վարդանի բնակարանը և օրհնել նրա սեղանը։

ԿԱԼԻՖՈՌՆԻԱՅՈՒՄ

Հունիսի 30-ին, հինգշաբթի, ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետը ինքնաթիռով, Իր շքախմբի ուղեկցությամբ, հովվապետական այցելության մեկնեց Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց Արևմտյան՝ Կալիֆոռնիայի թեմը։

Վեհափառ Հայրապետին Կալիֆոռնիա առաջնորդելու համար նախապես Չիկագո էին ժամանել Կալիֆոռնիայի թեմի առաջնորդ Տ. Բաբգեն եպիսկոպոս Վարժապետյանը, Լոս-Անժելոսի հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Տերվիշյանը և թեմական ժողովի ատենապետ պր. Ջան Քյուրքճյանը։

Չիկագոյի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհելուց հետո, Նրա շքախմբի անդամներից գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոսը և պր. Երվանդ Աղաճանյանը վերադարձան Նյու-Յորք։

Հինգ ժամվա օդային ճանապարհորդությունից հետո Վեհափառ Հայրապետը հասավ Լոս-Անժելոսի օդանավակայանը։

Օդանավակայանում անհամբեր սպասում էին Կալիֆոռնիայի թեմի հոգևորականության, թեմական ժողովի, ազգային-եկեղեցական և հայրենակցական միությանց ներկայացուցիչները, ինչպես նաև հայ և ամերիկյան մամուլի թղթակիցներ։

Օդանավակայանում ներկա էր նաև հոծ հայ բազմություն, ջերմորեն դիմավորելու համար Վեհափառ Հայրապետին։

Ամենայն Հայոց Հայրապետին անձամբ ողջունելու համար օդանավակայան էին եկել նաև Լոս-Անժելոսի քաղաքապետի ներկայացուցիչը, պետական պաշտոնական այլ անձնավորություններ, բույր եկեղեցիների ներկայացուցիչներ։

Նորին Ս. Օծությունը օդանավակայանում ողջունելուց հետո բոլորին, փառահեղ շքերթով, մեքենաների շարասյունով և ոստիկանական խմբի պատվո ուղեկցությամբ առաջնորդվեց Լոս-Անժելոսի Ս. Հակոբ նորակառույց եկեղեցին, ուր մուտք գործեց եկեղեցական թափորով, հանդիսավորապես և «Հրաշափառ»-ով։ Հայրապետական մաղթանքից հետո, Վեհափառ Հայրապետը, ողջունելով եկեղեցում ներկա հավատացյալ հայ հոծ բազմությանը, հաղորդեց Իր ողջույնն ու օրհնությունները և ապա տվեց Իր պատգամը։

Եկեղեցական արարողության ավարտին տեղի ունեցավ աջահամբույր։ Բոլոր ներկաները Նորին Ս. Օծության Աջը համբուրելով ստացան Նրա օրհնությունները։

Ապա Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց քաղաքի ընտիր հյուրանոցներից մեկը՝ «Բևեռլի հիլս» պանդոկը։

Վեհափառ Հայրապետի Կալիֆոռնիայի թեմում կատարած հովվապետական շնորհաբեր այցելության առթիվ, Նորին Մ. Օծության ընկերակցում էր նոր շքախումբ, որի կազմում էին, բացի Վեհափառ Հայրապետի մնայուն ուղեկիցներից, նաև գերաշնորհ Տ. Մամբրե, Տ. Տիրան և Տ. Վարդան սրբազան արքեպիսկոպոսները, առաջնորդ Տ. Բաբգեն եպիսկոպոսը, Տ. Տիրայր վարդապետ Տերվիշյանը, թեմական ժողովի ատենապետ պր. Ջան Քյուրքճյանը։

Հուլիսի 1-ին, ուրբաթ առավոտյան, հյուրանոցի Իր հարկաբաժնում, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել այցելությունը առանձին ազգայինների։

Կեսօրին, թեմական խորհրդի անդամ պր. Հերրի Հայրապետյանը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, հյուրանոցում կազմակերպել էր ընդունելություն։

Ճաշից հետո Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում նախագահեց թեմական ժողովի հանդիսավոր նիստին և ողջունելով ժողովականներին, տվեց Իր պատգամը։

Հուլիսի 2-ին, շաբաթ, Վեհափառ Հայրապետը առավոտյան ժամերին նույնպես շարունակեց ընդունել բազմաթիվ այցելությունները առանձին ազգայինների։

Ավելի ուշ Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելությունը հայտնի հայ կինո-բեմադրիչ Ռուբեն Մամուլյանի ծնողների, ինչպես նաև Վարդյան դերասան ամուլի, ապա հայտնի գրող Զավեն Սյուրմելյանի, որին ջերմ սիրով ողջունեց Վեհափառ Հայրապետը։

Կեսօրին առաջնորդարանի դահլիճում տրվեց ճաշկերույթ Վեհափառ Հայրապետի պատվին, Լոս-Անժելոսի Եկեղեցասեր հայ տիկնանց և երիտասարդաց միության անունից։

Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետը, ողջունելով բոլոր ներկաներին, օրհնեց և տվեց հայրապետական Իր հորդորն ու պատգամը։ Ապա առաջնորդ Տ. Բաբգեն եպիսկոպոսին պարգևատրեց եպիսկոպոսական պանակով, Տ. Վարդան արքեպիսկոպոսին և Տ. Տիրայր վարդապետ Տերվիշյանին նվիրեց ձեռաց խաչեր, իսկ քահանա հայրերին՝ մասնատուփեր։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը բարեհաճեց պատվել տեր և տիկին Անտոնյանների սեղանը և օրհնել նրանց աղն ու հացը։

Հուլիսի 3-ին, կիրակի, Վեհափառ Հայրապետը հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Լոս-Անժելոսի Նորակառույց Ս. Հակոբ եկեղեցում և խոսեց հոգեշունչ քարոզ։

Սուրբ պատարագին ներկա էր ավելի քան 6000 հոգի։

Սուրբ Պատարագից հետո, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել նախկին մի խումբ ռումինահայերի այցելությունը։ Երեկոյան, հյուրանոցի Իր հարկաբաժնում, Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելությունը առանձին ազգայինների։

Հուլիսի 4-ին, շաբաթ առավոտյան, Վեհափառ Հայրապետը Լոս-Անժելոսում ընդունեց Հայ եկեղեցասեր երիտասարդաց միության անդամներին։

Գերաշնորհ Տ. Տիրան, Տ. Բաբգեն, Տ. Կոմիտաս սրբազանները և պր. Հայկ Առաքելյանը այցելեցին տիկին Վերգինե Մամուլյանի բնակարանը։

Կեսօրին տեր և տիկին Մարիկյանները Վեհափառ Հայրապետի պատվին հյուրանոցում կազմակերպեցին ընդունելություն, որին ներկա եղան նաև այլ հրավիրյալներ։

Ժամը 4—6 Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելությունը մի շարք ազգայինների։

Երեկոյան, հյուրանոցի շքեղ սրահում, Վեհափառ Հայրապետի բարձր պատվին, հայ համայնքը կազմակերպեց մեծ ընդունելություն, մասնակցությամբ 800 հրավիրյալների։

Հուլիսի 5-ին, երեքշաբթի առավոտյան, Վեհափառ Հայրապետը այցելեց Լոս-Անժելոսի տեսարժան վայրերը։

Կեսօրին Կալիֆոռնիա համալսարանում կազմակերպվեց ընդունելություն Վեհափառ Հայրապետի պատվին։

Համալսարանում Վեհափառ Հայրապետը պրոֆեսորա-դասախոսական կազմի կողմից ընդունվեց ողջույնի ջերմ խոսքերով, որոնց պատասխանեց շնորհակալությամբ և գոհունակությամբ։

Ժամը 5-ին, հյուրանոցում, Վեհափառ Հայրապետը ընդունեց պաշտոնական այցելությունը Լոս-Անժելոսի քաղաքապետարանի վարչության անդամների, որոնք Նորին Ս. Օծության հանձնեցին քաղաքի պատվոգիրը, որով նա Լոս-Անժելոսի պատվավոր քաղաքացի էր հռչակվում։

Հուլիսի 6-ին, չորեքշաբթի առավոտյան, Վեհափառ Հայրապետը ավտոմեքենայով մեկնեց այցելության՝ Լոս-Անժելոսի մերձակա Վալի քաղաքի հայ համայնքին։ Նորին Ս. Օծությունը ընդունվեց «Հրաշափառ»-ով, համայնքի հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Թորգոմ քահանա Ավագյանի գլխավորությամբ։

Ապա Նորին Ս. Օծությունը օրհնեց հիմնաքարը հայոց Ս. Պետրոս նոր եկեղեցու։ Վերջում համայնքը Վեհափառ Հայրապետի պատվին տվեց ճաշկերույթ։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը այցելեց Պասադինա քաղաքի հայ համայնքին, որտեղ եկեղեցի մուտք գործեց «Հրաշափառ»-ով։ Հոգևոր հովիվն է արժանապատիվ Տ. Թաթուլ քահանան։

Վեհափառ Հայրապետը, ողջունելով համայնքի հավատացյալներին, տվեց Իր օրհնությունն ու պատգամը, ապա ներկա եղավ հայ մանուկների հանդեսին և օրհնեց բոլորին։

Երեկոյան հայ համայնքը Վեհափառ Հայրապետի պատվին տվեց ճաշկերույթ, որին մասնակցեցին 200 հրավիրյալներ։

Ուշ գիշերին Վեհափառ Հայրապետը վերադարձավ Լոս-Անժելոս։

Հուլիսի 7-ին, հինգշաբթի առավոտյան, Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամները այցելեցին Դիսնի-Լենդ։

Ավելի ուշ, Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունեց բազմաթիվ այցելություններ և վերջում օրհնեց Ս. Հակոբ եկեղեցու երկու սրբանկարներ, խուռն բազմությանը ներկայացնելով գեղեցիկ քարոզ Ս. Թարգմանչաց մասին, Ս. Սահակ Պարթևի և Ս. Մեսրոպ Մաշտոցի ազգային մեծ տոնի կապակցությամբ։

Եկեղեցական արարողության ավարտին Վեհափառ Հայրապետը եկեղեցուն նվիրեց Ս. Էջմիածնից բերված քանդակազարդ մարմարյա մի խաչքար։

Ապա առաջնորդարանի դահլիճում կազմակերպվեց ճաշկերույթ Վեհափառ Հայրապետի պատվին։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը նորից այցելեց Վալի քաղաքի հայ համայնքին և նախագահեց Իր պատվին կազմակերպված ընդունելության, որին մասնակցում էին 200 հրավիրյալներ։

Ընդունելության վերջում Վեհափառ Հայրապետը տվեց Իր պատգամը։

Ուշ գիշերին Վեհափառ Հայրապետը վերադարձավ Լոս-Անժելոս։



ԼՈՍ-ԱՆԺԵԼՈՍԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԻՊԼՈՄԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Հուլիսի 8-ին, ուրբաթ առավոտյան, Վեհափառ Հայրապետը, հյուրանոցի Իր հարկաբաժնում, ընդունում է Պասադինայի հայ համայնքի Երիտասարդաց վարչության անդամներին։

Ի պատիվ Վեհափառ Հայրապետին կազմակերպվում է նախաճաշ, որտեղ, ողջունելով Պասադինայի հայ համայնքի Երիտասարդաց միության անդամներին, Նորին Ս. Օծությունը օրհնում է նրանց և տալիս Իր պատգամը։

Հետմիջօրեին Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Իր շնորհաբեր այցելությամբ պատվել Լոս-Անժելոսի հայոց թեմական խորհրդի ատենապետ պր. Ջան Քյուրքճյանի բնակարանը և օրհնել նրա սեղանի աղն ու հացը։

Վեհափառ Հայրապետի պատվին Քյուրքճյան ընտանիքի կազմակերպած ընդունելության մասնակցում են նաև բազմաթիվ հրավիրյալներ։

Ճաշից հետո Վեհափառ Հայրապետը, Իր շքախմբի անդամների ընկերակցությամբ, ինքնաթիռով մեկնում է Ֆրեզնո։

ՖՐԵԶՆՈՅՈՒՄ

Հուլիսի 8-ին, ուրբաթ օրը, երեկոյան մոտ, Վեհափառ Հայրապետը հասնում է Ֆրեզնո։ Օդանավակայանում հավաքվել էր խուռն բազմություն, որն անհամբեր սպասում էր Նորին Ս. Օծության ժամանման։

Վեհափառ Հայրապետին արտակարգ խանդավառությամբ ընդունում են Ֆրեզնոյի հայ համայնքը, ընդունելության հանձնաժողովի անդամները, ազգային-եկեղեցական մարմինները՝ պր. Հ. Հայրապետյանի գլխավորությամբ, հայ և օտար մամուլի և ռադիոյի ներկայացուցիչները։

Օդանավակայանում Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորում է նաև Ֆրեզնո քաղաքի քաղաքապետը։

Վեհափառ Հայրապետը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, «Պահպանիչ»-ով օրհնում է բոլոր ներկաներին և հանդիսավոր շքերթով մեկնում Ֆրեզնոյի հայոց Ս. Պողոս եկեղեցին, ուր հավաքված հոծ բազմությունը, սրտագին ծափերով և ուրախ բացականչություններով, դիմավորում է Վեհափառ Հայրապետին։

Նորին Ս. Օծությունը եկեղեցի մուտք է գործում «Հրաշափառ»-ով և տալիս Իր հայրապետական օրհնությունն ու պատգամը։

Ապա Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Ֆրեզնոյի «Կալիֆոռնիա» հյուրանոցը։

Հուլիսի 9-ին, շաբաթ, Վեհափառ Հայրապետը առավոտյան ժամերին հյուրանոցում ընդունում է ազգային-եկեղեցական մարմինների, Ֆրեզնոյի հայ և ամերիկյան մամուլի ներկայացուցիչներին և պատասխանում նրանց հարցերին, այս առթիվ կազմակերպված պրես-կոնֆերանսում։

Վեհափառ Հայրապետը առանձին ընդունելություն է շնորհում Ֆրեզնոյի ռադիոյի «Հայկական ժամ»-ի ղեկավարին։ Այս առթիվ ձայնագրվում է Վեհափառ Հայրապետի պատգամը՝ ուղղված Ֆրեզնոյի հայությանը։

Երեկոյան, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Ֆրեզնոյի ազգային-եկեղեցական իշխանությունները հյուրանոցում կազմակերպում են մեծ ընդունելություն, որտեղ նորից խոսք առնելով, Վեհափառ Հայրապետը շնորհակալությամբ և օրհնությամբ պատասխանում է բազմաթիվ ճառախոսների ողջույնի խոսքերին և տալիս Իր ոգեշունչ պատգամը։

Հուլիսի 10-ին, կիրակի առավոտյան, Ֆրեզնոյի հայոց Ս. Պողոս եկեղեցում, Վեհափառ Հայրապետը մատուցում է հայրապետական սուրբ պատարագ և քարոզում։

Հանդիսավոր սուրբ պատարագին ներկա են լինում արտակարգ բազմություն, պաշտոնական անձնավորություններ, քույր եկեղեցիների պետեր և ներկայացուցիչներ։

Ժամը 3-ին, Ֆրեզնոյի մեծագույն սրահներից մեկում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, հայ համայնքը կազմակերպում է փառավոր ընդունելություն, մասնակցությամբ ավելի քան 1 000 այլ հրավիրյալների։

Ընդունելության ժամանակ ներկաներից շատերը ողջունում են Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելությունը Ֆրեզնո։

Նորին Ս. Օծությանը ողջունում են նաև Ֆրեզնոյի քաղաքապետը, պետական պաշտոնական և եկեղեցական այլ հրավիրյալներ։

Վերջում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և օրհնում բոլոր ներկաներին։

Նույն օրը երեկոյան, Վեհափառ Հայրապետը հյուրանոցում ընդունում է այցելությունը առանձին ազգայինների։

Հուլիսի 11-ին, երկուշաբթի առավոտյան, Վեհափառ Հայրապետը նորից ընդունում է այցելությունը բազմաթիվ ազգայինների, կազմակերպությունների, տարբեր հոսանքների ներկայացուցիչների։

Վերջում Նորին Ս. Օծությունը ընդունում է Ֆրեզնոյի ռադիոյի «Հայկական ժամ»-ի, հայ և ամերիկյան թերթերի թղթակիցներին։

Երեկոյան, Վեհափառ Հայրապետը ավտոմեքենայով մեկնում է Ֆրեզնոյի մերձակա Ռիդլի քաղաքը և այցելում հայկական համայնքին։

Ռիդլիի փոքրաթիվ հայ համայնքը Վեհափառ Հայրապետին դիմավորում է ջերմ

խանդավառությամբ և նրա բարձր պատվին կազմակերպում ընդունելություն, որտեղ Վեհափառ Հայրապետը, օրհնելով բոլորին, տալիս է Իր պատգամը։

Հուլիսի 12-ին, երեքշաբթի առավոտյան, հյուրանոցում, Վեհափառ Հայրապետը ընդունում է առանձին ազգայինների այցելությունները։

Կեսօրին, Ֆրեզնոյի եկեղեցասեր հայ տիկնանց միությունը կազմակերպում է ընդունելություն Վեհափառ Հայրապետի պատվին։ Ճաշկերույթի ընթացքում Վեհափառ Հայրապետը տալիս է Իր պատգամը և աջահամբույրի ժամանակ բաժանում Ս. Էջմիածնի խաչիկներ։

Երեկոյան, Վեհափառ Հայրապետը մեկնում է Եդեմի հայ համայնքի այցելության։ Տեղի հոգևոր հովիվն է արժանապատիվ Տ. Կարապետ ավագ քահանա Գավաֆյանը։

Նորին Ս. Օծությունը Եդեմում «Հրաշափառ»-ով առաջնորդվում է եկեղեցի, ուր օրհնում ու խաչիկներ է բաժանում բոլոր հավատացյալներին։ Այնուհետև Վեհափառ Հայրապետը նախագահում է համայնքի Իր պատվին տված բացօդյա ճաշին, եկեղեցու բակում։

Հուլիսի 13-ին, շաբաթի առավոտյան, հյուրանոցում Վեհափառ Հայրապետը ընդունում է բազմաթիվ այցելություններ։

Նորին Ս. Օծության շքախմբի անդամները մեկնում են դիտելու Ուոսամիտիի անտառները։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը ավտոմեքենայով մեկնում է Ֆաուլեր քաղաքի հայ համայնքի այցելության։

Ճանապարհին Վեհափառ Հայրապետը այցելում է Ֆրեզնոյի հայոց ծերանոցը, օրհնում և մխիթարում պատսպարյալ ծիրունիներին։

Ֆաուլերում Վեհափառ Հայրապետը ընդունվում է մեծ ոգևորությամբ, «Հրաշափառ»-ով առաջնորդվում է եկեղեցի, ուր օրհնում է ժողովրդին և տալիս Իր քարոզն ու պատգամը։

Այնուհետև Ֆաուլերի հայ համայնքը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպում է ընդունելություն և հանդես եկեղեցու սրահում, որտեղ մի անգամ ևս Նորին Ս. Օծությունը ողջունում է բոլոր ներկաներին և օրհնում։

Հուլիսի 14-ին, հինգշաբթի, հյուրանոցում Վեհափառ Հայրապետը ընդունում է բազմաթիվ այցելուների։

Կեսօրին Վեհափառ Հայրապետը բարեհաճում է այցելել թեմական խորհրդի անդամ պր. Հերբի Պերպերյանի ընակարանը և օրհնել նրա սեղանը։

Ժամը 4-ին Վեհափառ Հայրապետը օդանավով և Իր շքախմբի ուղեկցությամբ մեկնում է Սան-Ֆրանցիսկո։

ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿՈՅՈՒՄ

Հուլիսի 14-ին, հինգշաբթի, ժամը 5.30-ին, Վեհափառ Հայրապետը ժամանում է Սան-Ֆրանցիսկո։

Օդանավակայանում կազմակերպվում է ջերմ և խանդավառ ընդունելություն։ Այստեղ հավաքված հոծ բազմությունը ծափողջույններով և ուրախ բացականչություններով դիմավորում է Ամենայն Հայոց Հայրապետին։ Տեղի հոգևոր հովիվն է արժանապատիվ Տ. Արթուն քահանա Սմբատյանը։

Անընդհատ, ինչպես միշտ նման առիթներով, գործում են նաև թղթակիցները, ռադիոյի և հեռուստատեսության միկրոֆոններն ու լուսանկարչական գործիքները։

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ողջունում է Սան-Ֆրանցիսկո քաղաքի քաղաքապետության ներկայացուցիչը, որի ավտոմեքենայով էլ Նորին Ս. Օծությունը առաջնորդվում է քաղաքի ընտիր հյուրանոցներից մեկը՝ «Մարկ Հոպկինս» պանդոկը։

Այնուհետև Ամենայն Հայոց Հայրապետը մեծ շքերթով առաջնորդվում է Նորակառույց Ս. Հովհաննես եկեղեցին, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով, օրհնում բազմահազար ժողովրդին և տալիս Իր հայրապետական օրհնությունը, քարոզն ու պատգամը։

Ապա Վեհափառ Հայրապետի պատվին տրվում է ճաշկերույթ։

Հուլիսի 15-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության թղթակիցներին։ Կազմակերպվում է պրես-կոնֆերանս, որը տևում է մեկ ժամ։

Հուլիսի 16-ին, շաբաթ, Վեհափառ Հայրապետը, հյուրանոցի Իր հարկաբաժնում, ընդունում է այցելությունը բազմաթիվ ազգայինների։

Կեսօրին ընդունելության հանձնաժողովը Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպում է ճաշկերույթ, քաղաքի մոտակա մի շքեղ հյուրանոցում, մասնակցությամբ 100 հոգու։

Վեհափառ Հայրապետը կեսօրին նորից բարեհաճում է ընդունել առանձին ազգայինների և մտավորականների, որոնց թվում նաև գրագետ պր. Կոստան Զարյանին։

Երեկոյան կազմակերպվում է պաշտոնական մեծ ընդունելություն, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Սան-Ֆրանցիսկոյի Ս. Հովհաննես եկեղեցու, Սակրամենտո քաղաքի Ս. Երրորդություն եկեղեցու և Օկլենդ քա-

դաքի Ս. Վարդան եկեղեցու խորհուրդների կողմից։

Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետը հանդես է գալիս մեծ ելույթ-պատգամով։

Հուլիսի 17-ին, կիրակի, առավոտյան ժամերին, հյուրանոցի Իր հարկաբաժնում, Վեհափառ Հայրապետը ընդունում է մի շարք ազգայինների այցելությունները։

Ժամը 2-ին Նորին Ս. Օծությունը հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում Սան-Ֆրանցիսկոյի եպիսկոպոսականների Սեյնտ Գրեյս Մայր Տաճարում։

Սուրբ սեղանին սպասարկում են Տ. Մամբրե, Տ. Տիրան, Տ. Կոմիտաս սրբազանները, վարդապետներ, քահանա հայրեր և սարկավագներ։

Հայրապետական սուրբ պատարագին ներկա են 3 000 հոգի, պաշտոնական այլ անձինք, պետական ներկայացուցիչներ, քույր եկեղեցիների պետեր և հոգևորականներ։

Սուրբ պատարագի ընթացքում Վեհափառ Հայրապետին ողջունում է Եպիսկոպոսական Եկեղեցու եպիսկոպոսը։ Այնուհետև Վեհափառ Հայրապետը խոսում է ոգեշունչ քարոզ։

Երեկոյան տրվում է մեծ ճաշկերույթ Վեհափառ Հայրապետի պատվին, մասնակցությամբ 1 000 հոգու։ Պաշտոնական ընդունելության ներկա են նաև բազմաթիվ պաշտոնական անձինք, աշխարհական և հոգևորական, որոնցից շատերը սրտագին ճառերով ողջունում են Ամենայն Հայոց Հայրապետին։

Ընդունելության վերջում հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը ընդարձակ, բովանդակալից ճառով։

Հուլիսի 18-ին, երկուշաբթի առավոտյան, Վեհափառ Հայրապետը ընդունում է հասարակական տարբեր հոսանքների ներկայացուցիչների, առանձին ազգայինների այցելությունները։

Կեսօրին Նորին Ս. Օծությունը մեկնում է Օկլենդի հայ համայնքի այցելության, «Հրաշափառ»-ով մուտք է գործում եկեղեցի, օրհնում ժողովրդին, տալով Իր քարոզ-պատգամը։

Օկլենդի հայոց հոգևոր հովիվն է Տ. Շահե քահանա Սեմերճյանը։

Այնուհետև եկեղեցու սրահում կազմակերպվում է հավաքույթ, որտեղ նույնպես ելույթով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը Իր օրհնաբեր այցելությամբ պատվում է հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Շահե քահանա Սեմերճյանի բնակարանը։

Ուշ գիշերին Վեհափառ Հայրապետը վերադառնում է Սան-Ֆրանցիսկո։

Հուլիսի 19-ին, երկուշաբթի կեսօրին, Վեհափառ Հայրապետը գնում է Ս. Հովհաննես եկեղեցին և արարողությունից հետո եկեղեցուն նվիրում սկիհ և հոգևոր հովվին՝ մասնատուփ։

Ապա Վեհափառ Հայրապետը եկեղեցու սրահում հանդիպում է ունենում հավատացյալների հետ։

Ավելի ուշ Եկեղեցասեր հայ տիկնանց միությունը կազմակերպում է ճաշկերույթ Վեհափառ Հայրապետի պատվին։ Ապա Վեհափառ Հայրապետը պատվում է արժանապատիվ Տ. Արթուն քահանայի բնակարանը։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը ընդունում է Հայ երիտասարդաց կազմակերպության անդամներին։

Հուլիսի 20-ին, շաբաթի, առավոտյան, ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետը ինքնաթիռով մեկնում է Նյու-Յորք։

Լոս-Անժելոսի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին խանդավառությամբ ճանապարհում են ազգային-եկեղեցական իշխանությունները, թեմական խորհրդի անդամները, հոգևորականությունն ու հավատացյալների հոծ բազմությունը։

Ժամը 5.30-ին Վեհափառ Հայրապետը հասնում է Նյու-Յորք և առաջնորդվում ուղղակի «Ուալդորֆ Աստորիա» հյուրանոցի նույն հարկաբաժինը։

Երեկոյան, Վեհափառ Հայրապետը, հյուրանոցի Իր հարկաբաժնում, ընդունում է այցելությունը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանի։

Հուլիսի 21-ին, հինգշաբթի առավոտյան, Վեհափառ Հայրապետին հյուրանոցում այցելում են թեմական խորհրդի անդամներ, ազգային-եկեղեցական գործիչներ և մամուլի թղթակիցներ։

Կեսօրին, Վեհափառ Հայրապետը, հյուրանոցի Իր հարկաբաժնում, ընդունում է այցելությունը պր. Հայկ Գավուքճյանի, զորավար Սարգիս Զարդարյանի և պր. Տատուր Տատուրյանի։

Այս ունկնդրության ներկա էին նաև Տ. Սիոն, Տ. Տիրան արքեպիսկոպոսները և Տ. Բաբգեն եպիսկոպոս Վարժապետյանը, ինչպես նաև պր. Ալեքս Մանուկյանը և Կալիֆոռնիայի հայոց թեմական խորհրդի ատենապետ պր. Ջան Քյուրքճյանը։

Հուլիսի 22-ին, ուրբաթ առավոտյան, Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը առանձին անձնավորությունների։

Ժամը 3-ին, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը նախագահում է թեմական խորհրդի լիագումար նիստին, որին հրավիր-

ված էին նաև Կալիֆոռնիայի հայոց առաջնորդ Տ. Բաբգեն եպիսկոպոս Վարժապետյանը, Ֆրեզնոյի հայոց հոգևոր հովիվ Տ. Տիրայր վարդապետ Տերվիշյանը և թեմական խորհրդի ատենապետ պր. Ջան Քյուրքճյանը։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը ընդունում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու երգչախմբին։

Հուլիսի 23-ին, շաբաթ առավոտյան, հյուրանոցում, Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը զանազան հոսանքների ներկայացուցիչների։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Իր շնորհաբեր այցելությամբ պատվել պր. Տիգրան Սմսարյանի տունը և օրհնել նրա սեղանի աղն ու հացը։

Հուլիսի 24-ին, կիրակի, Վեհափառ Հայրապետը Նյու-Յորքի հայոց Ս. Խաչ եկեղեցում մատուցում է հրաժեշտի հանդիսավոր սուրբ պատարագ։

Կեսօրին, հանուն թեմի կազմակերպվում է ճաշկերույթ՝ Վեհափառ Հայրապետի բարձր պատվին։

Ժամը 6-ին Վեհափառ Հայրապետը այցերում է Բերգեն կաունդի քաղաքի հայ համայնքին, Նյու-Յորքի արվարձանում, որտեղ օրհնում է նոր կառուցվելիք հայ եկեղեցու և հայ մշակույթի տան հիմնաքարերը, խուռն բազմության ներկայության։

Արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը խոսում է գեղեցիկ քարոզ և տալիս Իր հայրապետական պատգամը։

Այնուհետև Բերգեն Կաունդիի հայ համայնքի կողմից Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպվում է ճաշկերույթ, 300 հոգու մասնակցությամբ։

Ճաշկերույթի ընթացքում լինում են ջերմ ուղերձներ։ Վերջում Վեհափառ Հայրապետը ասում է Իր օրհնության խոսքը։

Ուշ գիշերին Վեհափառ Հայրապետը վերադառնում է Նյու-Յորք։

Հուլիսի 25-ին, երկուշաբթի, առավոտյան ժամերին, Վեհափառ Հայրապետը հյուրանոցում ընդունում է այցելություններ։

Կեսօրին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այցելում է Նյու-Յորքի արվարձան Դարիենում պր. Հայկ Գավուքճյանի բնակարանը և օրհնում նրա սեղանն ու ընտանեկան օջախը։

Ճանապարհին Վեհափառ Հայրապետը կանգ է առնում Նյու-Յորքի գերեզմանատանը, «Հոգւոց» արտասանելու Մայր Աթոռի միաբան հանգուցյալ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Հովհաննիսյանի և նորոգ հանգուցյալ Աղան վարդապետ Փոթուխյանի շիրիմների վրա։

Հուլիսի 26-ին, երեքշաբթի, Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը մեկնում է Ուոտերտաուն՝ հայ համայնքի եկեղեցում պատարագելու և քարոզելու։

Երեկոյան հյուրանոցում Վեհափառ Հայրապետը ընդունում է թեմական խորհրդի անդամներին։

Հուլիսի 27-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամերին, հյուրանոցի Իր հարկաբաժնում, Վեհափառ Հայրապետը ընդունում է բազմաթիվ այցելություններ։

Կեսօրին Նորին Ս. Օծությունը բարեհաճում է պատվել տեր և տիկին Հարրի և Աղավնի Թաթոսյանների օջախն ու ընտանեկան սեղանը, օրհնելով նրանց աղն ու հացը։

Երեկոյան, Վեհափառ Հայրապետը նախագահում է թեմական խորհրդի ժողովին և օրհնում այդ առթիվ կազմակերպված ընթրիքի սեղանը։

Հուլիսի 28-ին, հինգշաբթի, Վեհափառ Հայրապետը հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունում է մի շարք այցելություններ։

Երեկոյան, Նորին Ս. Օծության բարձր պատվին թեմական խորհուրդը կազմակերպում է հրաժեշտի մեծ ընդունելություն, «Ստադլեր Հիլտոն» հյուրանոցում, մասնակցությամբ ավելի քան 800 հրավիրյալների և պաշտոնական անձնավորությունների։

Արտասանվում են հրաժեշտի ջերմ, հուզիչ ճառեր՝ Վեհափառ Հայրապետի բարեհաջող ճանապարհորդության մաղթանքներով։

Վերջում, ընդհանուր խանդավառության և ծափերի մեջ, խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և հայտնելով Իր գոհունակությունն ու շնորհակալությունը ԱՄՆ-ում կատարած Իր հովվապետական այցելության առթիվ ցույց տրված ժողովրդական, պաշտոնական ջերմ, անկեղծ ընդունելության և հյուրասիրության համար, տալիս է Իր հրաժեշտի պատգամը։

Նույն օրը, կես գիշերին, Վեհափառ Հայրապետը, Իր մնայուն շքախմբի անդամների հետ, մեկնում է Նյու-Յորքից դեպի Բուենոս-Այրես, Պան-Ամերիկեան ընկերության ինքնաթիռով։

Ինքնաթիռը, երկու և կես ժամ թռիչքից հետո, իջնում է Մայամի։ Տեղի փոքրաթիվ հայությունը օդանավակայանում ջերմորեն դիմավորում է Վեհափառ Հայրապետին, որը զրուցում, հետաքրքրվում է համայնքի ազգային-եկեղեցական հարցերով, ապա օրհնում բոլորին և Ս. Էջմիածնի խաչիկներ բաժանում ու շարունակում Իր ուղևորությունը։

Ինքնաթիռը ապա վայրէջք է կատարում Պանամայում և Պերուի մայրաքաղաք Լիմայում, որից հետո ուղղություն է վերցնում դեպի Պուենոս-Այրես։

(Շարունակելի)